Azg
armenian daily
10 ՓԵՏՐՈՒԱՐ 1998 ԵՐԵՔՇԱԲԹԻ # 20 (1523)

Ռոբերտ Քոչարյանը՝ նախագահական թեկնածու

Ընտրություններից հետո կփոխվի՞ ՀՀ խաղաքարտեզը

Մարտի 16-ի նախագահական ընտրություններին մասնակցելու է նաեւ ՀՀ վարչապետ, ՀՀ նախագահի լիազորությունները ժամանակավորապես ստանձնած Ռոբերտ Քոչարյանը: Այս մասին մեզի տեղեկացանք ՀՀ կառավարության լրատվական ծառայությունից:

Հիշեցնենք, որ դեռ փետրվարի 4-ին իր իսկ հրավիրած ասուլիսի ընթացքում Ռոբերտ Քոչարյանը, փաստորեն, չբացառեց այսպիսի հնարավորություն: Ասվեց միայն, որ նման տարբերակը միչ հավանական է: Հայաստանում այսօր փոխվել են ոչ այնքան իշխանությունները, որքան քաղաքական գիծը: Ու թեեւ ՀՀ նախագահ ընտրվելու ոեալ հավակնորդներն այսօր հենց նոր քաղաքականության կրողներից են, այնուամենայնիվ, հաստատես Ռոբերտ Քոչարյանի համապատասխան որոշումն էր բնակչության հետաքրքրության կենտրոնում:

Այս առումով հետաքրքրական է ՀՀ արտգործնախարարի տեղակալ Վ. Օսկանյանի միտքը՝ արտահայտված «Ազատություն» ռադիոկայանի պատվիրակության հետ իր հանդիպման ժամանակ. մարտի 16-ի ընտրություններից հետո Հայաստանի քաղաքականությունը Ղարաբաղի հարցում փոխվելու է: Այլ մանրամասներ չեն հաղորդվել:

Ա. Ղ.

ԼԵՌԱԼԱՅՈՒՄ

6 ամսով 36 ամիս փակված մնալուց հետո ՀՅԴ գործունեությունը վերագրանցվեց

ԱՐԻՍ ՂԱԶԱՐՅԱՆ

Երեկ փետրվարի 9-ին, ՀՀ արդարադատության նախարարության կոլեգիայի նիստը որոշեց «թույլատրել շարունակել ՀՅԴ հասարակական-քաղաքական կազմակերպության գործունեությունը եւ գրանցել կանոնադրության մեջ կատարված փոփոխությունները»: Կուսակցության գործունեությունը «ժամանակավորապես դադարեցված էր» 1994-ի դեկտեմբերի 28-ի Լեւոն Տեր-Պետրոսյանի հայտնի հրամանագրի, այնուհետեւ ՀՀ գերագույն դատարանի 1995-ի հունվարի 13-ի որոշման համաձայն: «ՀՅԴ կուսակցության գործունեությունը Հայաստանում կասեցվեց վեց ամսով»: Տվյալ ժամկետը պայմանավորված էր 1991-ի փետրվարի 26-ին ընդունված «Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի թիվ 7 հոդվածի համապատասխան կետով. «Հասարակական-քաղաքական կազմակերպության գործունեությունը կարող է կասեցվել մինչեւ վեց ամիս ժամկետով»: Ինչ վերաբերում է դատարանի որոշմանը, ապա դա կայացված էր առաջադրած առաջին մեղադրանքի ընդունման հետ: Կուսակցության ղեկավար մարմիններում օտարերկրյա քաղաքացիներ ընդգրկելու վերաբերյալ: Հիշեցնենք նաեւ, որ հիշյալ օրենքի թիվ 3 հոդվածի համապատասխան կետը արգելում է հայրենական կուսակցություններին «ղեկավարվել Հայաստանի տարածից դուրս գործող կազմակերպությունների, պետական մարմինների կողմից, մտնել այդ կազմակերպությունների կազմակերպման կառուցվածքի մեջ»:

Բերվածը հարցի իրավական կողմն է: Իրականում ողջ ոդիսականն ակնհայտ քաղաքականացված գործընթաց էր: Սոսկ փաստը, որ ներկայացված օրենքի ընդունումից հետո չորս տարի շարունակ «աչքաթող է արվել» նման բացթողումը եւ միայն 1995-ին է հայտնաբերվել այս անհամաձայնությունը, ասվածի լրացուցիչ վկայությունն է: Չկար նաեւ ոչ մի որոշում հայտնի 13 լրատվամիջոցները եւ մի տարան փակելու գույքը բռնագրավելու մասին:

Տես էջ 2

ԵՐԵՎԱՆ

ՀՀՇ-ին քիչ ժամանակ է մնում

ԵՐԵՎԱՆ, 9 ՓԵՏՐՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ՀՀՇ համագումարը վերջնական պատասխան կտա այն հարցին, թե ՀՀՇ-ն ի՞նչ ձեւով է մասնակցելու նախագահական ընտրություններին, այս մասին փետրվարի 7-ին լրագրողներին հայտնեց այդ կուսակցության վարչության նախագահ Վանո Սիրադեղյանը՝ նույն օրը կայացած ՀՀՇ հանրապետական խորհրդի նիստի ավարտից հետո:

Նախորդ օրերին արդեն իսկ վարչությունը նիստեր գումարել է ընտրություններին մասնակցելու ձեւերը ճշգրտելու օրակարգով: Արտահայտվել են բազմաթիվ տեսակետներ: Հայտնի է, որ, մասնավորապես, նախկին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը կտրուկ դեմ է եղել, որ ՀՀՇ-ն թեկնածու ունենա ընտրությունների ժամանակ:

Շաբաթ օրը տեղի ունեցած ՀՀՇ վարչության, ապա՝ հանրապետական խորհրդի նիստերի ժամանակ եղել են մի շարք առաջարկներ, որոնք պտտվել են, ինչպես Վանո Սիրադեղյանն է բնորոշել, «զրո մասնակցությունից մինչեւ սեփական թեկնածու ունենալու» տեսակետների շրջանակներում: Մասնավորապես նշվել է, որ Հայաստանի քաղաքական դաշտում հավասարակշռություն, ըստ այդմ՝ կայուն իրավիճակ ապահովելու համար ՀՀՇ-ն պետք է մասնակցի ընտրություններին:

Ինչպես հայտնեց Վ. Սիրադեղյանը, մասնակցության տարբեր ձեւեր կարող են լինել՝ եւ թեկնածուով, որը չի բացառվում, եւ առանց թեկնածուի: Իսկ լրագրողների այն հարցին, թե ո՞ւմ է նախագահի ամենառեալ թեկնածուն համարում, պրն Սիրադեղյանն ասաց, թե այդպիսիների տեսնում է թե կուսակցության ներսում, եւ թե դրսում: Իսկ երբ առաջադրումները կավարտվեն, Վ. Սիրադեղյանը իր դիրքորոշումը կճշտի:

ՀՀՇ լիդերների շրջանում առայժմ կարծես միասնական դիրքորոշում չկա ընտրությունների վերաբերյալ, եւ այդ հարցերի վերջնական պատասխանը կտա ՀՀՇ արտահերթ համագումարը: Այն տեղի կունենա փետրվարի 16-ին: Հիշեցնենք, որ փետրվարի 17-ը վերջին օրն է, երբ կուսակցություններն իրենց բարձրագույն մարմինների որոշումները՝ թեկնածու առաջադրելու մասին, պետք է ներկայացնեն կենտրոնական ընտրական հանձնաժողով:

Յայտարարութիւն Ռամկավար Ազատական կուսակցութեան

Հայաստանի Հանրապետական Նախագահ Լեւոն Տեր Պետրոսեանի հրաժարումով Հայաստանի մէջ կը յառաջանայ քաղաքական տագնապ մը, որ անհրաժեշտ է շուտով լուծել: Արդէն իսկ անհրաժեշտ միջոցները ձեռք առնուած են քաղաքական կեանքը կայունացնելու եւ ռամկավարական սկզբունքներով վերականգնելու նախագահութիւնն ու պետական բոլոր կառոյցները, որոնք որոշ ցնցումներու ենթարկուեցան նախագահին հրաժարումով:

Դժբախտաբար այս կացութիւնը ստեղծուեցաւ նախագահ Լեւոն Տեր Պետրոսեանի յայտնի ասուլիսով եւ իր «Պատերազմ, թէ՞ խաղաղութիւն» յօդուածով, ուր ան կը վերլուծէր Ղարաբաղի շուրջ միջազգային քաղաքական շրջանակներու դիրքորոշումը եւ կը թելադրէր Մինսքի խումբի որոշումը օգտագործել Ղարաբաղի եւ Ադրբէյջանի միջեւ ստեղծուած հակամարտութիւնը լուծելու՝ փուլ առ փուլ համաձայնութեան սկզբունքով, ուր ամենէն վերջ կու գար Ղարաբաղի քաղաքական իրաւակարգը որոշելու փուլը, երբ Ղարաբաղը նախապէս պիտի հեռացած ու պարպած ըլլար գրաւած բոլոր հողերը եւ ազերի գաղթականները վերադարձած ըլլային այդ հողերուն վրայ:

Նախագահը առանց նկատի առնելու Ղարաբաղի եւ Հայաստանի, ինչպէս նաեւ սփիւռքի հայ ժողովուրդին զգացումները, Ղարաբաղի առնչութեամբ ստեղծուած հոգեվիճակը, աճապարեց հայութեան առաջարկելու լուծման միջոց մը, որ գիտէր, թէ անկարելի պիտի ըլլար ընդունելի դարձնել: Ստեղծուեցաւ կացութիւն մը, ուր նախագահին ուրիշ խաղաղ ելք չէր մնար՝ քան պարկեշտօրէն ու քաջութեամբ իր հրաժարականին որոշումն առնել:

Դժբախտաբար իրեն հետեւեցան կարգ մը ուրիշ բարձրաստիճան ղեկավարներ, որոնց պարտականութիւնն էր սակայն մնալ իրենց պաշտօններուն վրայ, պետութեան վերակազմակերպումը իրագործել եւ ապա հրաժարիլ, եթէ չէին ուզեր առանց նախագահ Լեւոն Տեր Պետրոսեանի մնալ իշխանութեան ղեկավարութեան վրայ:

Գուցէ տակաւին կանուխ է գնահատումներու եւ քաղաքական արժեւորումներու համար, սակայն պատմութեան համար պէտք է արձանագրել, թէ նախագահ Տեր Պետրոսեանի գլխաւորած իշխանութիւնը ծեռնհասօրէն տարաւ Հայաստանի անկախացման գործընթացը, կերտեց Ղարաբաղեան յաղթանակը, վարեց պետական մեծ փորձի տէր երկրներու համարժէք արտաքին քաղաքականութիւն մը եւ Հայաստանը հեռու պահեց քաղաքացիական կռիւներէ:

Սակայն այսօր, երբ այլեւս առնուած է անվերադառնալի որոշումը, ընտրուած է Ազգային ժողովի նոր նախագահ, սահմանադրական կարգով վարչապետ Ռոբերտ Քոչարեան ստանձնած է նախագահի պաշտօնակատարի եւ նախագահական ընտրութիւններու կազմակերպման պարտականութիւնները, մեր ցանկութիւնն ու մաղթանքն է, որ խաղաղութեան եւ ամբողջական ազատութեան մէջ տեղի ունենայ հանրապետութեան նոր նախագահին ընտրութիւնը, որուն շուրջ հաւաքուին նոր, կարող եւ հայրենասէր դէմքեր՝ մեր պետութիւնն առաջնորդելու այսօրուան միջազգային քաղաքական տագնապալից մթնոլորտին մէջ՝ ապահովելու միջազգային քաղաքական ու տնտեսական շրջանակներու, բարեկամ երկիրներու անհրաժեշտ ու կենսական օգնութիւնը Հայաստանին:

Մեզի համար քաղաքական հաստատութեան երաշխիքներ կը մնան սահմանադրականօրէն կատարուող իշխանութեան փոխանցումն ու մեր հայրենաբնակ ժողովուրդին համբերատար եւ զգօն կեցուածքը:

Գոհունակութեամբ կը հաստատենք, թէ նախագահի պաշտօնակատարութիւնն ստանձնած վարչապետ Ռոբերտ Քոչարեանը արդէն յանձնառու եղած է յարգելու Հայաստանի միջազգային համաձայնութիւնները եւ Հայաստանի սահմանադրական կարգերու պահպանումը:

Համախոհուրդ Հայաստանի Ռամկավար ազատական կուսակցութեան ղեկավարութեան հետ, ՌԱԿ Կեդրոնական վարչութիւնս մօտէն կը հետեւի քաղաքական զարգացումներուն եւ իր խօսքը կը հասցնէ մայր հայրենիքի թէ սփիւռքի մեր ժողովուրդին:

Այս առիթով կը շնորհաւորենք պրն Ռ. Քոչարեանը իր նոր եւ չափազանց պատասխանատու պաշտօնին մէջ եւ յաջողութիւն կը մաղթենք իր նախաձեռնութեանց:

ՀԱՅԿԱՐԷՆ ՈՒՂՈՒՆԵԱՆ
Նախագահ, ՌԱԿ Կեդրոնական վարչութիւն
Մոնթրէալ, Փետրուար 5, 1998

Ժիրինովսկին տարանցիկ ճանապարհով Երեւանում

ԱՐԱԲՍ ՍԱՖԱՐՅԱՆ

Փետրվարի 9-ին, գիշերվա 1:30-ի սահմաններում Ռուսաստանի «Վնուկովոյան» ավիաընկերության Իլ 86 օդանավը, նախապես թույլտվություն ստանալով, վայրէջք կատարեց «Զվարթնոց» օդանավակայանում:

Օդանավում էին ՌԴ Պետդումայի 27 պատգամավորներ, մոտ 120 լրագրողներ եւ ՌԴ լիբերալ-դեմոկրատական կուսակցության ղեկավար Վլադիմիր Ժիրինովսկին: Հիշատակենք, որ չվերթը ուղղված էր Իրաք հումանիտար օգնություն առաքելու նպատակով, սակայն պաշտոնական Բաղդադ անհայտ պատճառներով առանց որեւէ բացատրության, արգելել է թռիչքը իր տարածքով:

Հարկադրաբար վայրէջք կատարելով Երեւանում, երեկ Ռուսաստանի պատվիրակությունը հանդիպել է ԱԺ նախագահ Խոսրով Հարությունյանի եւ պատգամավորների հետ, որի ընթացքում հայտարարել է, որ Հայաստանը միակ պետությունն է, որ առանց նախնական պայմանների ընդունել է ՌԴ պատվիրակությանը, միաժամանակ կարեւորել հայ-ռուսական ռազմավարական հարաբերությունները, նշել, որ դրանք կարեւոր են ոչ միայն երկու երկրների, այլ նաեւ տարածաշրջանի համար:

Անդրադառնալով Բաղդադի ներկայիս ճգնաժամային իրավիճակին, Ժիրինովսկին չի բացառել, որ ներկա սպառնալիքը կարող է վերածվել երրորդ համաշխարհային պատերազմի, ինչը կարող է կտրուկ փոխել նաեւ հարեւան երկրների դիրքորոշումը եւ ստեղծել լարվածություն տարածաշրջանում:

Պատվիրակությունն այցելել է Օիծեռնակաբերդի հուշահամալիր եւ ցեղասպանության թանգարան, որից հետո հայտարարել, թե պետք է դատապարտվի այդ ոճրագործությունը, ընդգծելով, որ դարասկզբին տեղի ունեցած ոճրագործության մինչ օրս անպատիժ մնալն անքույլատրելի է:

Տես էջ 8

ԸՆՏՐԱԿԱՆ

Առանց նախագահի

ՆԱՐԻՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ

Այսպիսի լուծում սպասվում էր Հայաստանի ներքաղաքական ճգնաժամը: Իրադարձությունների սրընթաց զարգացումը վկայում էր, որ ներիշխանական ոլորտներում խութերն ու ալեկոծումները որեւէ կողմի համար ինչ-որ պահ ճակատագրական եւ վերջնական են լինելու: Եվ երբ դարաբաղյան հիմնախնդիրը հայտնվեց ներիշխանական բախումների կիզակետում, գորդյան հանգույցը կտրվեց հօգուտ «իշխանության ձեզ հայտնի մարմինների»:

Ճգնաժամը հաղթահարվեց, սակայն համոզված չենք, թե տվյալ պահի համար լավագույն լուծում գտավ: Ի մասնավորի, ՀՀ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի հրաժարականը փոքր-ինչ վաղաժամ էր, եւ վերջինիս պարտքն էր ճգնաժամը լուծել հօգուտ վաղաժամկետ խորհրդարանական ընտրությունների, ասել է թե՝ լուծարել Ազգային ժողովը եւ նշանակել նոր արտահերթ խորհրդարանական ընտրություններ: Այդ քայլն ավելի կառուցողական հասարակական հարաբերություններ, եւ ներիշխանական բախումները չէին ընկալվի որպես ներքին հակակշիռները վերացնելու, փոխհարաբերությունները եւ հաշվարկները հստակեցնելու քաղաքականություն:

Բացի այդ՝ ԱԺ-ի լուծարմամբ հնարավորություն կընձեռվեր գործող նախագահական ինստիտուտին ներկայացուցչական հակակշիռ ստեղծելու՝ ի դեմս նոր, օրինական ընտրված խորհրդարանի: Այս քայլը կարեւոր էր նաեւ նրանով, որ գործող Սահմանադրությամբ իշխանությունների իրավասությունների վերաբաշխման պայքարը չի ավարտվում: Նոր խորհրդարանական ընտրություններից հետո պետք էր սկզբունքային փոփոխություններ կատարվեր Սահմանադրության մեջ, համաձայն որոնց կենտրոնացված նախագահական համակարգը պետք էր որոշ չափով ապակենտրոնացնել՝ դարձնելով ուղղահայաց, վերեւից-ներքեւ սկզբունքով նախանշված պետական կառավարումը հավասարակշռել ընտրվի գործադիր մարմինների ստեղծմամբ:

Սակայն այսօր այս ամենի մասին մնում է ընդամենը երազել եւ նկատի ունենալ, որ քաղաքականությունը նաեւ իրողությունների ընդունումն է, եթե ի զորու չեմ եղել կանխել դրանք:

Տես էջ 3

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՈՒՇԱԳԻՐ

«Պարույր Հայրիկյանը հարկ է համարում կրկին անդրադառնալ իշխանությունների փոփոխման հարցին, քանի որ դա այն ծառն է, որ կանխորոշում է մեր հետագա իշխանությունների բնույթը» հայ քաղաքական միտքը հարուցանելու նին են, տվյալ դեպքում, ինքնաքննության բնագրով էր թելադրված, նշեց նա՝ վկայակոչելով Եվրախորհրդի քաղաքական հարցերով հանձնաժողովի զեկուցագրի այն հատվածը, ուր խոսվում է հայաստանյան ընտրություններում ի հայտ եկած լուրջ բացթողումների եւ նոր ընտրական օրենքի ընդունման մասին եւ նշվում, որ «ազատ եւ արդար ընտրությունների անցկացումը էապես կդյուրանար Հայաստանի անդամակցումը Եվրախորհրդին». Մեր հարցին պատասխանելով, ԻՄ նախագահը չժխտեց, բայց եւ առանցքային չնկատեց Արցախի դերը վերջին իրադարձություններում, բացի այդ, կտրականապես մերժեց «Քոչարյանը Ադրբեջանի քաղաքացի է» իրեն վերագրվող արտահայտությունը (ինքն ասել է, որ «Քոչարյանը Հայաստանի քաղաքացի չէ»):

Անդրադառնալով առաջիկա ընտրություններին ԻՄ մասնակցությանը, Հայրիկյանն ասաց, որ ամենամեծ եւ 12 դիվանականների տրամադրություններից ակնհայտ է այդ առնչությամբ ԻՄ վերաժողովի պատասխանը «Հայրիկյանն իրավունք չունի չառաջադրելու իր թեկնածությունը», եւ, եթե առաջիկա 2-3 եւաթում արտառոց բան չպատահի, «Հայրիկյանի մասնակցության հարցը հարց չէ»: Ասուլիսից դուրս, «գիտական լուրջ հետազոտություններից» ելնելով իր հնարավորությունները լավագույններից մեկը կամ լավագույնը գնահատելով, ԻՄ նախագահը խոսեց իր մի դաշնակցի մասին, որի անունը չհրապարակեց, թեեւ, կարելի է ենթադրել, որ խոսքը «Հայրենիք»-ի մասին է: Նրա կարծիքով, Վազգեն Մանուկյանի հնարավորությունները նույնպես բարձր են պայմանով, որ Հայրիկյանը պատասխանի նրան, սակայն այս անգամ դա չի լինի հերթը Մանուկյանինն է «Մանուկյանը շատ լավ մարդ է, լավ ընկեր, ընտանի՝ լավ հայր, լավ քավոր, բայց մենք խոսում ենք ժողովրդի ճակատագիրը տնօրինելու մասին». Հարցերին պատասխանելով, ԻՄ նախագահը Վանո Սիրադեղյանի թեկնածության առաջադրումը բնական համարեց. Դաշնակցության վերագրանցումը ողջունելի, դրական գնահատեց «Ռոբերտ Քոչարյանի հաստատակամությունը եւ Վազգեն Սարգսյանի մասնակի ապաշխարանքը» վերջին իրադարձություններում:

ԼԻԼԻԹ ՊՈՂՈՍՅԱՆ

ԱՍՈՒԼԻՍ

Հայրիկյանի մասնակցությունը հարց չէ, իսկ Տեր-Պետրոսյանը հեռացավ, որ չհեռացվի

Ասում է Պարույր Հայրիկյանը

«Պարույր Հայրիկյանը հարկ է համարում կրկին անդրադառնալ իշխանությունների փոփոխման հարցին, քանի որ դա այն ծառն է, որ կանխորոշում է մեր հետագա իշխանությունների բնույթը» հայ քաղաքական միտքը հարուցանելու նպատակով եւ ճիշտ եզրակացությունների բերելու մտադրությամբ, չար ծառի պտուղների մասին «հիմնադրույթին» հավատարիմ, ասուլիսն այսպես սկսեց երեկ ԻՄ նախագահը: Տեր-Պետրոսյանի հրաժարականի «պարտադրվածության» վերաբերյալ իր նախնական թեզը վերանայելով, «տրամաբանական եզրահանգումների միջոցով» Հայրիկյանը գտել է ՀՀ նախկին նախագահի եւ «կամպանիայի» «նախանձելիորեն հետեւողական եւ միասնական հրաժարականների» պատճառը»: Այն է «Եվրախորհրդի առաջիկայում ընդունելիք (ըստ էության արդեն ընդունված) բանաձեւը» 1995 թ. եւ 1996 թ. անարդար ընտրությունների պատճառով ՀՀ անդամակցությունը մերժելու մասին. «Եթե հրաժարական չտար երկու ամիս հետո խայտառակ կերպով հեռանալու էր», ասաց ԻՄ նախագահը մերժելով արցախյան կարգավորման դերը հրաժարականների շերթում, եւ վերջինիս հիմնում անձնական շահի հերթական դրսեւորում տեսավ. «Իրեն խաղաղասեր, Վազգեն Սարգսյանին եւ Ռոբերտ Քոչարյանին պատերազմի հրձիգ ներկայացրեց, հետագայում վերադառնալու համար»: Բոլորին կովեցնելու, հետո հաշտարարի դերում հանդես գալու գործելակերպը հատուկ է եղել Տեր-Պետրոսյանին եւ ճիշտ եզրակացությունների բերելու մտադրությամբ, չար ծառի պտուղների մասին «հիմնադրույթին» հավատարիմ, ասուլիսն այսպես սկսեց երեկ ԻՄ նախագահը: Տեր-Պետրոսյանի հրաժարականի «պարտադրվածության» վերաբերյալ իր նախնական թեզը վերանայելով, «տրամաբանական եզրահանգումների միջոցով» Հայրիկյանը գտել է ՀՀ նախկին նախագահի եւ «կամպանիայի» «նախանձելիորեն հետեւողական եւ միասնական հրաժարականների» պատճառը»: Այն է «Եվրախորհրդի առաջիկայում ընդունելիք (ըստ էության արդեն ընդունված) բանաձեւը» 1995 թ. եւ 1996 թ. անարդար ընտրությունների պատճառով ՀՀ անդամակցությունը մերժելու մասին. «Եթե հրաժարական չտար երկու ամիս հետո խայտառակ կերպով հեռանալու էր», ասաց ԻՄ նախագահը մերժելով արցախյան կարգավորման դերը հրաժարականների շերթում, եւ վերջինիս հիմնում անձնական շահի հերթական դրսեւորում տեսավ. «Իրեն խաղաղասեր, Վազգեն Սարգսյանին եւ Ռոբերտ Քոչարյանին պատերազմի հրձիգ ներկայացրեց, հետագայում վերադառնալու համար»: Բոլորին կովեցնելու, հետո հաշտարարի դերում հանդես գալու գործելակերպը հատուկ է եղել Տեր-Պետրոսյանին

հայտ եկած լուրջ բացթողումների եւ նոր ընտրական օրենքի ընդունման մասին եւ նշվում, որ «ազատ եւ արդար ընտրությունների անցկացումը էապես կդյուրանար Հայաստանի անդամակցումը Եվրախորհրդին». Մեր հարցին պատասխանելով, ԻՄ նախագահը չժխտեց, բայց եւ առանցքային չնկատեց Արցախի դերը վերջին իրադարձություններում, բացի այդ, կտրականապես մերժեց «Քոչարյանը Ադրբեջանի քաղաքացի է» իրեն վերագրվող արտահայտությունը (ինքն ասել է, որ «Քոչարյանը Հայաստանի քաղաքացի չէ»):

Անդրադառնալով առաջիկա ընտրություններին ԻՄ մասնակցությանը, Հայրիկյանն ասաց, որ ամենամեծ եւ 12 դիվանականների տրամադրություններից ակնհայտ է այդ առնչությամբ ԻՄ վերաժողովի պատասխանը «Հայրիկյանն իրավունք չունի չառաջադրելու իր թեկնածությունը», եւ, եթե առաջիկա 2-3 եւաթում արտառոց բան չպատահի, «Հայրիկյանի մասնակցության հարցը հարց չէ»: Ասուլիսից դուրս, «գիտական լուրջ հետազոտություններից» ելնելով իր հնարավորությունները լավագույններից մեկը կամ լավագույնը գնահատելով, ԻՄ նախագահը խոսեց իր մի դաշնակցի մասին, որի անունը չհրապարակեց, թեեւ, կարելի է ենթադրել, որ խոսքը «Հայրենիք»-ի մասին է: Նրա կարծիքով, Վազգեն Մանուկյանի հնարավորությունները նույնպես բարձր են պայմանով, որ Հայրիկյանը պատասխանի նրան, սակայն այս անգամ դա չի լինի հերթը Մանուկյանինն է «Մանուկյանը շատ լավ մարդ է, լավ ընկեր, ընտանի՝ լավ հայր, լավ քավոր, բայց մենք խոսում ենք ժողովրդի ճակատագիրը տնօրինելու մասին». Հարցերին պատասխանելով, ԻՄ նախագահը Վանո Սիրադեղյանի թեկնածության առաջադրումը բնական համարեց. Դաշնակցության վերագրանցումը ողջունելի, դրական գնահատեց «Ռոբերտ Քոչարյանի հաստատակամությունը եւ Վազգեն Սարգսյանի մասնակի ապաշխարանքը» վերջին իրադարձություններում:

ԼԻԼԻԹ ՊՈՂՈՍՅԱՆ

Հրանտ Խաչատրյան. «Դրական շատ միտումներ եմ տեսնում»

«Բոլորի տրից քարն ընկել է, բայց ոտքերից կախված բազմաթիվ քարեր կան անցյալ 70 տարիների եւ հատկապես վերջին 10 տարվա ժառանգությունը. կարծրացած հասարակական հարաբերակցություններ, պայմանականություններ (իշխանական բանակ, ընդդիմադիր բանակ եւ այլն), կաթիսալի անհամասեռ բաշխում», ընթացիկ պահը որպես «բացարձակ շանս» գնահատելով, ասաց ԻՄ նախագահ Հրանտ Խաչատրյանը հիշյալ խոչընդոտները հաղթահարելի համարելով «այն բարի կամքի հիման վրա, որ արտահայտված էր մինչեւ հրաժարականների ավարտը»: ԻՄ նախագահը նշեց, որ որոշ մտավախություններ ի հայտ եկան խորտով Հարությունյանի ընտրությունից հետո, թեեւ դա էլ բնական էր. «թերեւս, այդ պահին ուրիշ շարունակություն չկար»: Կուսակցության կուտակած միակ կաթիսալը համարելով վստահությունը, որն Խաչատրյանն անթույլատրելի համարեց վերջինիս մսխումը, քանզի «նյութական միակասը կարելի է վերականգնել, մինչ հավատի կորուստն անդառնալի է»

Անդրադառնալով առաջիկա նախագահական ընտրություններին, ԻՄ նախագահն ասաց, որ հավատում է ազատ եւ արդար ընտրությունների անցկացման վերաբերյալ կառավարության եւ ուժային կառույցների ղեկավարների հայտարարությունների անկեղծությանը, թեեւ արդար էվեարկությունը դեռեւս ազատ ընտրություն չէ. ազատ ընտրողը չունի սոցիալական եւ տնտեսական կախվածություններ, նա էությամբ ազատ է: Անկախության չափանիշը ազգային սահմանադրության ընդունումն է, ինչը հնարավոր է արդեն 2000 թ., եթե «այսօր բոլոր քայլերը ժամանցյի նման արվեն»:

Ինչ վերաբերում է միասնական թեկնածու առաջադրելուն, ապա ժամանակը կարճ է, եւ պայմանավորվածություններ հազիվ թե ձեռք բերվեն, ասաց պրն Խաչատրյանը սեփական թեկնածության վերաբերյալ հարցին պատասխանելով «Քոչարյանի պես՝ չի բացառվում»: «Ի՞նչ կասեիք Վանո Սիրադեղյանի այն հայտարարության մասին, թե Տեր-Պետրոսյանի հրաժարականը երկրի քուլացում է նշանակում եւ ծեռնտու է արտաքին ուժերին» հարցի վերաբերյալ ԻՄ նախագահի կարծիքն այն էր, որ Վանո Սիրադեղյանը վաղուց արդեն կորցրել է խոսելու (ավելի ճիշտ հրապարակորեն մտքեր հայտնելու) իրավունքը, իսկ «դարաբաղյան մաֆիայի հաղթանակի» վերաբերյալ պտսվող խոսակցությունների մասին ասաց. «Չեմ ընդունում դարաբաղցի-հայաստանցի բաժանումը: Այդ տերմինի ներմուծման «մեղքը», կապված «Իրավունքի» որոշ հրապարակումների հետ, մեզ է վերագրվում, սակայն մենք նկատի ունենք գործող կլանային համակարգը: Բարեբախտաբար, կլանային կառույցները վերջին իրադարձություններին որեւէ կերպ չեն առնչվում եւ ընթացան միակ տրամաբանական ճանապարհով, որ խախտված էր որոշակի խմբի (ՀՀՇ-ի) գործունեության պատճառով: Այսօր այդ խոչընդոտը վերացել է, ու նաեւ առաջիկա ընտրություններից է կախված, թե Հայաստանում հասարակական հարաբերություններն ինչպես կզարգանան: Այս պահին ես տեսնում եմ շատ դրական միտումներ»

Լ. Պ.

ԼԵԳԱԼԱՅՈՒՄ

6 ամսով 36 ամիս փակված մնալուց հետո ՀՅԴաշնակցությունը վերագրանցվեց

Սկիզբը էջ 1

Փաստորեն, ողջ գործընթացը ներծծված էր բացահայտ կամայականությամբ, իսկ գործի իրական էությունը ուղղակի անգոր էր կուրացնելու կամ բթացնելու հասարակական կարծիքը: Ավելին, արդեն 1997-ի դեկտեմբերի 30-ին, ՀՀ արդարադատության նախարարությունն էր ներկայացված ՀՅԴ նոր՝ այսօր արդեն ընդունված կանոնադրությունը, եւ դժվար է ասել, թե ինչպիսին կլիներ կուսակցության հետագա գործունեությունը՝ նախկին քաղաքական կյանքի հոսանքի շարունակման պայմաններում:

Ինչեւէ, այսօր արդեն ՀՅԴ-ն լեգալ քաղաքական կազմակերպություն է: ՀՀ արդարադատության նախարարության կոլեգիայի նիստից անմիջապես հետո մեզ հաջողվեց հանդիպել նախարար Մարաս Ալեքսանյանի եւ փոխնախարար Տիգրան Պետրոսյանի հետ: Նախարարի կարծիքով, հանրապետությունում ստեղծված ներքաղաքական իրավիճակը, ըստ էության, միայն արագացրեց ողջ գործընթացը, որն ընդունում էր նաեւ Լեւոն Տեր-Պետրոսյանի նախագահության օրոք: Պարոն Ալեքսանյանը հիշատակեց համաքաղաքական բազմաթիվ հանդիպումները, որոնց շնորհիվ զգալի փոփոխություններ արվեցին ՀՅԴ կանոնադրության մեջ: Այսուհետ ՀՅԴ-ն դրսից անկախ, հայաստանյան կուսակցություն է, որի կանոնադրությունը լիովին համապատասխանում է ՀՀ-ում գործող օրենքներին: Նա ինքնուրույն հասարակական-քաղաքական կազմակերպություն է եւ չի ենթարկվում ՀՅԴ բյուրոյին:

Ինչ վերաբերում է առաջիկա նախագահական ընտրություններում ՀՀ վարչապետ Ռոբերտ Քոչարյանի թեկնածության հնարավոր առաջադրման իրավական կողմին, ապա Մարաս Ալեքսանյանը ասաց. «Եթե Սահմանադրության նկատմամբ ցուցաբերեք համալիր մոտեցում, ապա պարզ է, որ իրավական ոչ մի խոչընդոտ չկա»: Համենայն դեպս, չեղյալ չի հայտարարված Լեռնային Ղարաբաղը խորհրդային Հայաստանի մաս ճանաչելու որոշումը, իսկ մինչ այդ գործող ՀԽՍՀ Սահմանադրության մեջ ասված է. «Հայաստանում գտնվող ԽՍՀՄ յուրաքանչյուր քաղաքացի օգտվում է ՀԽՍՀ քաղաքացիների բոլոր իրավունքներից»:

1998-ի փետրվարի 9-ը, անտարակույս, կգրաղեցնի իր համապատասխան պարբերությունը ազգային տարեգրության էջերում: Այն նշանավորվեց նաեւ ՀՅԴ կուսակցության գործիչ Հրանտ Մարգարյանի ազատ արձակմամբ. ըստ էության հենց հանրապետության ներքաղաքական իրավիճակն է այսօր երկրի ամենաորակյալ փաստաբանը: Հետաքրքիր է, ապագայում ի՞նչ վերաբերմունքի կարժանան նաեւ մյուս դատապարտվածները:

ՀՅԴ գերագույն մարմինը երեկ բնականաբար ոգեւորված էր, բայց եւ աշխատունակ: Մենք խնդրեցինք Վարդան Պետրոսյանին եւ Գեղամ Մանուկյանին ներկայացնել օրվա պատկերը. «Մեծ նշանակություն ունեցող որոշում էր: Ընդ որում ոչ միայն ՀՅԴ, այլեւ մեր ժողովրդի համար, քանզի գործունեության իրավունք ստացավ ազգային խոշորագույն կուսակցություններից մեկը», ասաց Վարդան Պետրոսյանը: Ըստ Գեղամ Մանուկյանի, հենց երեկ վերջնականապես վերջ դրվեց իրավական այն բոլոր քաքքուկներին, որոնք խոչընդոտում էին կուսակցության գործունեությունը:

Ո՞ւմ է պատճառելու ՀՅԴ-ն առաջիկա ընտրություններում, ներկայացնելո՞ւ է թեկնածու. «Մենք զորակցությունն ենք հայտնել Ռոբերտ Քոչարյանի քաղաքականությանը, ընդ որում ինչպես ներքին կյանքում, այդպես էլ Լեռնային Ղարաբաղի հարցի կարգավորման վերաբերյալ. ու՞մ է պատճառելու ՀՅԴ-ն այդ խնդիրը պետք է ինքվի: Կարծում եմ, երկու-երեք օրերի ընթացքում կընդունի համապատասխան որոշումը», ասաց Վարդան Պետրոսյանը:

Ինչ վերաբերում է կասեցված եւ դադարեցված լրատվամիջոցների վերաբացման հնարավորությանը, ապա ըստ պարոն Պետրոսյանի, «սա արդեն զուտ կուսակցական խնդիր է, եւ հավանաբար նույն 2-3 օրերի ընթացքում հնարավոր կլինի ընդունել որոշում լրատվամիջոցների վերաբացման վերաբերյալ»:

ՀՌԱԿ-ը շնորհավորում է ՀՅԴ-ի վերագրանցումը

Երեկ, Հայաստանի Ռամկավար ազատական կուսակցության Հանրապետական վարչությունը շնորհավորական նամակ է հղել Հայ հեղափոխական դաշնակցության գերագույն մարմնին, որտեղ մասնավորաբար ասվում է

Գոհունակությամբ ընդունեցինք Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության վերագրանցման մասին լուրը:

Քաղաքական իրադարձությունների զարգացումը հանգեցրեց նրան, որ Հայաստանի Հանրապետությունում ստեղծվեց մի այնպիսի մթնոլորտ, երբ վերջ տրվեց ազգի ավանդական եւ ազդեցիկ կուսակցություններից մեկի անարդարացի հալածանքներին:

Ազգի համար բախտորոշ այս պահին իշխանությունների կատարած քայլը կնպաստի հասարակության մեջ ընդհանուր լարվածությունը թուլացնելու, ներքաղաքական մթնոլորտն առողջացնելու, ժողովրդավարությունը խորացնելու, ազգային հասարակական միասնականությունը վերահաստատելու կարեւոր գործընթացներին:

Համոզված ենք, որ ՀՅԴ-ը եւ ՀՌԱԿ-ը այսուհետ եւս կշարունակեն իրենց գործնական փոխհարաբերությունները եւ կհամագործակցեն հանուն ազգային գերագույն նպատակների, ի բարօրություն հայրենիքի:

■ ***Վարդան Պետրոսյանը ճշտում է:*** *ՀՅԴ ԳՄ անդամ Վարդան Պետրոսյանը հեռախոսով ճշտեց «Ազգի» փետրվարի 7-ի համարի «Դարաբաղյան մաֆիայի վարկածը...» հրապարակման դրվագներից մեկը նախագահական առաջիկա ընտրությունների վերաբերյալ:*

Պրն Պետրոսյանը չի ասել, թե Դաշնակցության համար ընդունելի է համարում երեք թեկնածություն, այլ ասել է «Առայժմ հրապարակի վրա գտնվող թեկնածուներից անձամբ ես տեսնում եմ երեքին» (խոսքը Վահան Հովհաննիսյանի, Ռոբերտ Քոչարյանի եւ Վազգեն Մանուկյանի մասին է):

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հասարակական է տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս 562941, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET: azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրենութիւն / հեռ. 562863
Համակարգչային
ծառայութիւն / 581841
Apple Macintosh
համակարգչային շարուածը
«Ազգ» թերթի
Յղումը «Ազգին» պարտադիր է
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն
վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone 521635
47 Hanrapetoutian st.
Yerevan, Armenia, 375010

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՈՒՄԲԱԳԻԿ

ԸՆՏՐԱԿԱՆ

Առանց նախագահի

Սկիզբը էջ 1

Իսկ առկա խողոքությունն այս է՝ ՀՀ նախագահը հրաժարական է տվել, եւ Հայաստանում մարտի 16-ին անցկացվելու են արտահերթ նախագահական ընտրություններ: «Առանց նախագահի» իրավիճակը թելադրում է ոչ միայն քաղաքական, այլեւ բարոյական դայմաններ, որոնց համաձայն՝

1. Տեր-Պետրոսյանի քաղաքական դարտությունը, անշուշտ, վերջնական դյունքների եւ դիտարկումների է արժանի, նախեւառաջ այն դատճառով, որ հաջորդ բոլոր իշխանություններն ըստակ գիտակցեն, որ քաղաքականությունն ավարտվում է այնտեղ, որ դեմ է առնում ժողովրդի կամքին: 2. Տեր-Պետրոսյանի քաղաքականությունը վերլուծելիս չի կարելի անտեսել այն նվաճումները, որոնք իրականացան նրա կառավարման ժամանակահատվածում: 3. չի կարելի դիտակավորել նրան, հեգնել եւ կամ չարախնդալ նրա դարտության վրա:

Տեր-Պետրոսյանի հեռանալը քաղաքական ասդարեզից, ամենաբուռնցիկ դիտարկումների դեդքում անգամ, ամրագրում է հետեւյալ երկու խոդությունը՝ ա) իր կառավարման ընթացքում բոլոր դժոխային մեղքերը վերագրելով ընդդիմությանը, Տեր-Պետրոսյանը հրաժարականը տվեց ոչ թե ընդդիմության, այլ իշխանության «հայտնի մարմինների» դահանջով, բ) 1996 թ. սեդտեմբերի 26-ը փակեց դեդի հատարակություն եւ դեդի ընդդիմություն տանող Տեր-Պետրոսյանի բոլոր ճանադարհները, գ) նախագահի հրաժարականով ավարտվեց մի ոդջ ժամանակաշրջան Լեւոն Տեր-Պետրոսյանի ժամանակաշրջանը ադաշխադարհումներով եւ նահանջներով, բռիչքներով եւ անկումներով, հաղթանակներով ու դարտություններով, սխալներով եւ ձեռքբերումներով: Տեր-Պետրոսյանի Հայաստանի առաջին նախագահի ժամանակաշրջանը հայ ժողովրդի նորագույն դատմության անբաժան մասն է կազմելու:

Տեր-Պետրոսյանի հրաժարականից հետո հատարական եւ քաղաքական իրավիճակը Հայաստանում կարելի է բնութագրել մեկ «նախընտրական» բառով: «Նախընտրական» իրավիճակը օրեցօր նեղանում է ավելի ու ավելի մեծ թվով մարդկանց: Մեծանում է նաեւ ինքնարկումների եւ կանխատեսումների շրջանակը: 40-օրյա կարճ ժամանակահատվածը խացնում է նաեւ կրքերն ու հույզերը: Ակնկալումները շարունակում են աճել, եւ առաջին տեղատվությունը թերեւս կայանա փետրվարի 16-ին նախագահի թեկնածուների ազգանունների դաշտանական հրադարակման օրը:

Այս օրերին շրջանառության մեջ եղած թեկնածուների ազգանունների ցանկը մոտենում է գրեթե մեկ տասնյակի, սակայն եթե իրականության վերածվեն այն լուրերը, թե 5000 դոլարի նախընտրական գրավը վերադարձվելու է միայն ընտրված նախագահին, ադա թեկնածուների թիվը կկտրվի չափ կկրճատվի: Ի՞նչ անուններ են այսօր շրջանառության մեջ. ա) ԻՄ-ի նախագահ Դարույր Հայրիկյան, բ) կոմկուսի ներկայացուցիչ, թերեւս Սերգեյ Բաղալյանը, գ) Վազգեն Սարգսյան, դ) Ռոբերտ Քոչարյան՝ ՀՀ վարչադետ, ե) ԱԺՄ նախագահ Վազգեն Մանուկյան:

Մինչ թեկնածուների հնարավորություններն առանձին-առանձին քննարկելը, նկատի ունենանք հետեւյալ հանգամանքը, առկա ուժերի դասավորության մեջ ուշադրի փոփոխություն է [illegible] բերելու ՀՀԿ-ի եւ ՀՅԴ-ի [illegible] [illegible] [illegible] կու կուսակցությունների անվանումների կողքի-կողքի գտնվելու հանգամանքը, դարզ է, որ նրանց ազդեցության չափերը տարբեր են, սակայն էական՝

Եվ այդդես, ո՞ւմ է աջակցելու ՀՀԿ-ն (համոզված ենք, որ կուսակցությունը հանդես չի գա սեփական թեկնածուով): Այսօր հնարավոր են ՀՀԿ-ական դաշինքի հետեւյալ տարբերակները՝ ա) ՀՀԿ–կոմկուս, բ) ՀՀԿ–Հայրիկյան, գ) ՀՀԿ–ԻԿ: Հայտարարված (ուսիեւ բացահայտ) աջակցությունն այս կամ այն թեկնածուին նշանակում է, որ վարկաբեկվելու է մյուսը թեկնածուն: Մեր համոզմամբ, ՀՀԿ-ն չի դաշտդանի որեւէ թեկնածուի, սակայն մեկ թեկնածու կա, որին լուռ կդաշտդանի ՀՀԿ-ի մի փոքր, բայց ազդեցիկ մասը (այդ մասին հետագայում):

ՀՅԴ-ն կարծես թե հայտարարել է այն 3 հիմնական թեկնածուների մասին, որոնց նախաստեղծ է աջակցել Վահան Հովհաննիսյան, Ռոբերտ Քոչարյան, Վազգեն Մանուկյան: Եվ քանի նեղաշնակցական շրջանակները վկայում են, որ Վահան Հովհաննիսյանի թեկնածության առաջադրումը բացառվում է, ուստիեւ մնում են վերջին երկու թեկնածուները՝ Քոչարյանը եւ Մանուկյանը, որոնց աջակցելիս ՀՅԴ-ի ձայները բերեւս կկիսվեն:

Վերադառնալով թեկնածուներին: Կոմկուսի ներկայացուցչի հաղթանակը նախագահական՝ ընտրություններում բացառվում է դատմության անիվը հետ չի շրջվի եւ կոմունիստական հասարակարգը Հայաստանում չի վերադառնա: Բացառվում է նաեւ ԻՄ-ի նախագահի հաղթանակը (Դ. Հայրիկյանը հավանաբար դա լավ է հասկանում): Վազգեն Սարգսյանի թեկնածության առաջադրումը խոչնդոտում է հասարակության լայն շրջանակների եւ լուրջ կասկածներ առաջացնում օրինական, ազատ եւ արդար ընտրությունների անցկացման հանդեպ: Մրցասդարեզում մնում են երկու հիմնական թեկնածուներ՝ Ռոբերտ Քոչարյանը եւ Վազգեն Մանուկյանը: Նրանցից ո՞ւմ հնարավորություններն են առավել իրական: Քննարկենք նրանց թեկնածությունները առանձին-առանձին:

Ռոբերտ Քոչարյան՝ ՀՀ վարչադետ եւ նախագահի դաշտոնակատար: 43 տարեկան: Անկուսակցական:

Այս դահին Քոչարյանի առաջադրման իրավական հնարավորություններն անհայտ են կադված քաղաքացիության հետ: Մեր համոզմամբ, սակայն, Քոչարյանի դեդքում քաղաքացիության հարցն առնվազն բարոյական չէ առաջ քաշելը (մանավանդ որ արդեն մի անգամ Դ. Հայրիկյանի դեդքում խախտվել է): Եվ այդդես, ընդունելով, որ Քոչարյանի դեդքում իրավական արգելքը հաղթահարված է, նշենք նրա հնարավորությունները: Այս թեկնածուի հաղթանակը խոչընդոտող գործոններն են՝ ա) ներքաղաքական (ավելի ճիշտ՝ ներիշխանական) վերջին զարգացումները հասարակական կարծիքը ընդունել է որդես ոչ միայն դարաբաղյան հիմնախնդրի էության տարաձայնությունների գոյության հետեւանք, այլ նաեւ որդես միմյանցից իշխանությունից վերցնելու, «հաշիվներ դարզելու», միով բանիվ իշխանության կռիվ (իսկ դա հասարակությունն ընդունում է որդես բացասական գործոն, որքան էլ փափագում էր Տեր-Պետրոսյանի հրաժարականը), բ) բացասական գործոն է նաեւ Քոչարյանի ընտրահենարանի բացակայությունը, գ) որքան էլ սխալ, այնուամենայնիվ, Հայաստանում հասարակական գիտակցությունը բացասական է արձանագրում Քոչարյանի ոչ տեղական ծագումը, դ) կառավարության տնտեսական քաղաքականության վերջին քանկացումները հակասոցիալական բնույթ էին կրում եւ բողոքներ հասակ հասցեագրված են կառավարությանը:

Դրական գործոններն՝ ա) նա նոր մարդ է Հայաստանի քաղաքական կյանքում եւ բացասական գծերով անհայտ, բ) դարաբաղյան հիմնախնդրի կարգավորման առումով հայտնի է իր դիրքորոշումը:

Դրական գործոններն են՝ ա) Մանուկյանի նախագահ ընտրվելու դեդքում հատարական լայն շերտեր վստահ են, որ մեծ ցնցումներ տեղեկական եւ քաղաքական կյանքում չեն լինի, տեղի չի ունենա սեփականության մեծ վերաբաշխում, բ) ըստ այդմ լայն առումով ժառանգականությունը չի կտրվի, գ) մեկ անգամ արդեն 1996 թ. սեդտեմբերին Մանուկյանն ընտրվել է նախագահ եւ իշխանությունը դեսք է վերադարձնել նրան, դ) նրա քաղաքական հայացքները ազգային ծագում ունեն, ուստիեւ ազգային արժեքային համակարգը կդրվի աղազա քաղաքական համակարգի հիմքում:

Մեր համոզմամբ, այսօր 1998 թ. փետրվարի 9-ին, ԱԺՄ նախագահի հաղթելու հնարավորությունները որոշակիորեն ավելի են, սակայն կարեւոր չէ անգամ, թե ո՞վ է հաղթելու: Առավել կարեւոր է, որ Հայաստանում վերջադես վերականգնվի ժողովրդավարության հիմնարար ինստիտուտը՝ ընտրությունները, որն էլ հիմք կդառնա Հայաստանում քաղաքացիական եւ քաղաքական ինստիտուտների կայացմանն ու զարգացմանը (մանավանդ որ Քոչարյանն ու Մանուկյանը դեդք է կարողանան միասին կիսել իշխանությունը, ըստ այդմ դատասխանատվությունը): Եթե մի անգամ եւս ժողովրդի կամքը դեդք է ճզմվի տանկերի թրթուրների տակ, որեմն հավերժորեն կվտանգենք թե Հայաստանի, թե Ղարաբաղի աղագան: «Առանց նախագահի» բնութագրվող այս ժամանակահատվածը թեղեւ կարճատեւ է, սակայն փխրուն է եւ դյուրաբեկ, անօրինականության համիները կարող են արմատախիլ անել այն հույսը, որը վերջադես արթնացավ այս հին ժողովրդի մեջ, իսկ ազատության եւ անկախության անձրեւները կարող են կենսանյութ հաղորդել այն հույսին, որը մխված է դեդի աղազան:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Տեր-Պետրոսյանի հրաժարականը դարտվողական կուսակցության դարտությունն էր»

Հայ մտավորականներից ձեւավորված Ազգային խորհուրդը հանդես է եկել հայտարարությամբ, ուր մասնավորադես ասվում է. «Ազգային խորհուրդը Լեւոն Տեր-Պետրոսյանի հրաժարականը գնահատում է որդես ոդջ հայ ժողովրդի, հասարակական եւ իշխանական հայրենասեր ուժերի հաղթանակ Արցախի հիմնախնդրում դարտվողական քաղաքականություն որդեգրած իշխանական ուժերի նկատմամբ, եւ հույս է տածում, որ Արցախի եւ ՀՀ անվտանգությունն այսուհետ հուսալի ձեռքերում է»: Ափսոսանք հայտնելով, որ «ոչ լեգիտիմության բարդույթի, իր եւ հասարակության միջեւ խորացող օտարացման» դատճառով, ուշացած հրաժարականում անգամ նախագահը զերծ չմնաց Արցախի խնդիրն իր նկատմամբ ճնշման դատրվակ ներկայացնելու եւ «իշխանության է գալիս դատերազմի կուսակցությունը» զրդարանից, հայտարարության հեղինակները նշում են, որ իրականում խոսքը դարտվողական կուսակցության դարտության մասին է, եւ հրաժարականն ընդունվել է ոչ թե իշխանության մարմինների, այլ, իրականում, ժողովրդի դահանջով: «Անդատժելիությունը ծնում է նոր հանցագործություններ: Համոզված ենք, որ իշխանական կառույցները կմաքրվեն հանցագործներից, որոնք կդատժվեն օրենքի ոդջ խստությամբ, իսկ բանտերում հեծեծող հայրենասերներն անհադաղ ազատ կարձակվեն», ասվում է հայտարարության մեջ: Այն ավարտվում է «ժողովրդի հետ համատեղ եւ միասնաբար, մեր ազգային գաղափարախոսությունից, նրա հազարամյա իդեաներից ու ձգտումներից եւ դատմական առաքելությունից բխող միակ եւ ճշմարիտ ուղին» գտնելու հավատով:

«Սեդտեմբերի 25» նոր դատավարությունը՝ նոր դայմաններում

Երեկ ՀՀ ԳԴ-ում, արդեն նոր քաղաքական իրավիճակում (գոյություն չունեցող կամ փոխված դետդատվերի դայմաններում) վերսկսվեց սեդտեմբերի 25-ի դեդքերի վերջին «մեղավորներից» մեկի՝ Արմեն Խաչատրյանի գործի քննությունը, որն ամբաստանվում է ՀՀ Քր. օրենսգրքի տխրահռչակ 74-րդ (զանգվածային անկարգություններին) հոդվածով: Առաջին նիստը, որ հրսդնկել էր «խորհրդարանական հրաժարականների» շքերթին, հետաձգվել էր տուժողների չներկայանալու դատճառով:

Դատական կոլեգիան՝ նախագահում է Մուրեն Կոստանյանը, դետատանում է մեղադրողի դերում Յուրա Մանուկյանն է: Այս նիստում հասարակական դաշտդան Լուսինե Սահակյանի ավանդական բացարկը դատավորին մերժվեց, փոխարենը դետական մեղադրողի միջնորդությամբ վաս առողջական վիճակի դատճառով փոխվեց ամբաստանյալի խափանման միջոց կալանքը, եւ վերջինս մեղադրական եզրակացության՝ ընթերցողին լավ ծանոթ «տաբլոնը» լսեց վանդակից դուրս: (Հետաքրքիր է, նախագահի դաշտոնակատարը մտադիր չէ՞ ՀՀ դատական դրակտիկայից վերացնել ամբաստանյալներին վանդակում դահելու տխուր ավանդույթը): Դատական նիստը հետաձգվեց: Փակագծում ասենք, որ Խաչատրյանի գործն ուշացել է, քանզի ամբաստանյալը փախուստի մեջ էր եւ ձերբակալվել է մոտ 6 ամիս առաջ:

Է. Դ.

ՀԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

«Լաս Վեգաս»-ը բացեց իր դռները

Լիբանանյան զբոսաշրջիկային առաջին ձեռնարկության՝ «Լաս Վեգաս» խաղատան դահլիճը բազմաթիվ հյուրերի էր ընդունում ուրբաթ երեկոյան: Հաստատության նախագահ Պիեռ Միհաննան եւ տնօրեն Ֆաուզի Եֆելյան ջերմորեն դիմավորեցին Հայաստանում Լիբանանի Հանրադետության հավատարմատար Սպադ Զախիային ու Սիրիայի Արաբական Հանրադետության դեսդան Հասան Համեդին, որոնք նակվում էր, լիբանանցի գործարար Սամիր Խնեյզերի մասնակցությամբ խաղատան աշխատանքների սկիզբը դրվեց: «Լաս Վեգաս»-ի տնօրենը կտրեց ավանդական կարկանդակը, ադա կազմակերդեց վիճակահանություն՝ ուր բախտավորը շահեց հեռուստացույց:

Լավատեսորեն տրամադրված լինելով Հայաստանի տնտեսական ադագայի մասին, «Լաս Վեգաս»-ի բացման շնորհանդեսին ներկա գտնվող

եկել էին Լիբանան-Հայաստան համագործակցության օրինակ այս հաստատության բացմանը: Ներկա էին Լիբանանից, արաբական երկրներից, Ռուսաստանից եկած եւ բնականաբար Հայաստանի բազմաթիվ գործարարներ, հանրահայտ դեմքեր, լրագրողներ իրենց ընտանիքներով:

Մինչ հյուրասիրությունը շարունակվում էր, լիբանանցի եւ արաբ գործարարները խոստացան մի շարք զբոսաշրջիկային ու տնտեսական ծրագրեր, եթե իրենց տրամադրվեն անհրաժեշտ միջոցներ ու դյուրություններ: Նրանք մատնացույց արեցին, որ Հայաստանը հետաքրքրությամբ հաղթահարի իր դժվարությունները, ու երկիրը ադրի խաղաղ ու բարգավաճ կյանքով:

Հ. ՄՈՍԻՍՅԱՆ.

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Օ1-ՐՈՒՄԵՄԻՄ

Վերջերս դիվանագետ Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի Դաշնության նախկին դեսպան, ճանաչված պատմաբան Վլադիմիր Ստուպիշինը հրապարակել է («Դիալոգ» հանդես, 1997 թ. թիվ 7) իր այս ափսառանքը ընդարձակ ներածական խոսքի հետ, որի մեջ գիտապատմական հմուտ մեկնաբանությամբ ներկայացնում է արցախյան գոյապայքարի ընթացքը, հաղթական ավարտն ու տպավորիչ հետևանքները: Հեղինակը ցույց է տալիս, թե հարցի արդար լուծումը որքան ձեռնտու, շահավետ է նաեւ Ռուսաստանի Դաշնության համար, ու ինչպես նա եւս շահագրգռված պիտի լինի այդպիսի լուծմամբ: Այնտեղ, օրինակ, կա այսպիսի դատողություն: «1991 թ. սեպտեմբերին Ադրբեջանի իշխանություններն իրենց հանրապետությանը տվին անկախ ընթացք կորստրեն խախտելով այն ժամանակ դեռեւս գործող խորհրդային օրինականությունը. նրանք իրենց հետեւից տարան նաեւ այդ հանրապետության ոչ թուրք ժողովուրդներին «մոռանալով» նրանց հարցնել, իրե՞նք էլ ցանկանում են թուրքերի հետ դուրս գալ Խորհրդային Միությունից: Չհարցրին Արցախի հայերին, հյուսիսի լեզգիներին, ավարներին, հրդերին, թալիշներին եւ ուրիշներին, ինչպես այդ պահանջում էր օրենքը: եւ դրանով իսկ Ադրբեջանի իրենց հայտարարած ինքնավարությունը դարձրին բավական կասկածելի: Իսկ որքա՞ն օրինական էր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրինականությունը, երբ, օգտվելով որտեղ լինելու հարցի լուծման իր արդար իրավունքից, նախ բաժանվեց Ադրբեջանից, ապա դա հաստատեց իր ժողովրդի 1991 թ. դեկտեմբերի 10-ի հանրաքվեով: հետագայում ֆանի-ցս հաստատելով պառլամենտական ընտրություններով, որոնց օրինականությունը հաստատեցին միջազգային դիտորդները: Ղարաբաղյան ժողովրդի անկախությանն ի պատասխան Բաքվի իշխանությունները 1991 թ. սեպտեմբերի 2-ին «վերացրին» ԼՂԻՄ-ն, եւ նրա տարածքը հայտարարեցին բռնակցված իրենց հանրապետությանը բարեբախտաբար միայն թղթի վրա:

Երեք տարի շարունակ նրանք փորձում էին յուրացնել այն զենքի ուժով, մահու տվին որքան երիտասարդ կյանքեր, ոչնչացրին նյութական անհուն հարստություններ, վիթխարի կործանումներ պատճառեցին տնտեսությանը եւ չգոհացան այդ ամենով: Պատերազմի դաշտում պարտություն կրելով նրանք հիմա էլ հույս ունեն, թե մեծ տերությունների նավթային ախորժակով իրենք տեր կդառնան Ղարաբաղին նույն այդ մեծերի խարդավանքով:

Դա պիտի նշանակի կտրուկ անկում Հայաստանի հզորության եւ դա էլ իր հերթին պիտի բերի Անդրկովկասում Ռուսաստանի քաղաքական դիրքերի խարխլման, քանի որ այնտեղ Ռուսաստանն այլեւս չունի առավել հուսալի դաշնակից, քան Հայաստանն է Արցախի հետ, այն էլ անկախ նրանից ԼՂՀ ժողովուրդը կշարունակի՞ իր անկախությունը, կցանկանա վերամիավորվե՞լ Հայաստանին, թե՞ կխնդրի Ռուսաստանի հովանավորությունը»:

Ուրեմն, ներածության այս եւ համանման դատողություններին թող ծանոթանան ռուս ընթերցողները, մանավանդ շահագրգիռ պատասխանները: Իսկ կարգավորման բուն ծրագիրը բարգմանեցինք եւ հրապարակման տվեցինք հուսալով, որ հայ դիվանագետներն ու բարձրաստիճան գործիչներն այլեւս չեն գանգատվի նման նյութերի բացակայությունից եւ գոնե կտվորեն արցախյան կարգավորման նախապատրաստությանը մասնակցել պահանջներով եւ ոչ թե միայն հակառակը՞ի մեծ մասամբ անարդար պահանջների անմռունչ ունկնդիրը լինելու պատրաստակամությամբ:

ԲԱԳՐԱՏ ՈՒԼՈՒԲԱԲՅԱՆ

ՈՐԻՍԱԿԱՆ ՄԱՍՈՒԼ

Ղարաբաղյան կարգավորման իմ ծրագիրը

ՎԼԱԴԻՄԻՐ ՍՏՈՒՊԻՇԻՆ

1. Ինչպես եւ ԼՂՀ դեկավարությունը, ես գտնում եմ, որ կարգավորման ճանապարհն անցնում է ԼՂՀ եւ Ադրբեջանական Հանրապետության ուղղակի բանակցություններ միջով, իսկ հիմը կարգավորումը պետք է լինի փաթեթային, որը չի խանգարի փաթեթային լուծման առանձին մասերի փուլային իրականացմանը:

2. Չկա մի ժողովուրդ, որին ինչ-որ մեկն իրավունք ունենա մերժելու իր քաղաքական կարգավիճակի ընտրությունը: Այդ ընտրությունը ինքնակա իրավունքն է ցանկացած ժողովրդի, հետեւաբար նաեւ Լեռնային Ղարաբաղի ժողովրդի: Քաղաքական իրավիճակը (սատուս) կարող է եւ պետք է որոշվի ժողովրդի կամքի ազատ արտահայտման միջոցով: ԼՂՀ ժողովուրդը դա կատարել է մի քանի անգամ, անկախ այն բանից, որ նա այն հաջողությամբ պատշաճեցրել է նաեւ զենքը ձեռին: Քանի որ ԵԱՀԽԿ-ի «եռյակը» փաստաթղթում ընդունել է ԼՂՀ ժողովրդի ինքնորոշման իրավունքը, որը նույնն է, ինչ քաղաքական սատուսի ազատ ընտրությունը, ապա ով էլ որ լինի, այլեւս չի կարող ԼՂՀ-ին փաթաթել ղարաբաղցիներին ոչ ձեռնտու, նրանց չկամեցած քաղաքական սատուս: Դա իրավաբանական անհեթեթություն է (նոնսենս), որը լիովին հակառակ է Հելսինկյան եզրափակիչ ակտին եւ որեւէ տրամաբանության չի կարող եւ չպետք է դիմադրության առնչի:

3. Փաթեթային լուծման առաջին կետը պետք է լինի Ադրբեջանի Հանրապետության աներկրքիմի հրաժարումը Հայաստանի նկատմամբ տարածքային հավակնություններից եւ որեւէ այնպիսի փորձից, որը կարող է ոչ միայն խախտել, այլ պարզապես ոչնչացնել Լեռնային Ղարաբաղի տարածքային ամբողջությունը: Ադրբեջանական Հանրապետության տարածքային ամբողջությունը ոչ մի չափով չի հակասում Արցախի ազգային լիակատար ինքնորոշմանը, քանի որ նա երբեք չի եղել Ադրբեջանի ԽՍՀ անբաժանելի մասը, այլ գտնվել է նրա կազմում՝ իր սեփական տարածքի վրա (դա նշված է 1923 թ. ԼՂԻՄ-ի կազմելուն վերաբերող որոշման մեջ), իսկ Արցախի տարածքի մյուս մասը պարզապես բռնագրավված է եղել Խորհրդային Ադրբեջանի կողմից: ԼՂՀ-ը երբեք չի մտել Ադրբեջանի Հանրապետության մեջ, այդ պատճառով էլ, անկախ պետություն հայտարարելով իր տարածքի մի մասի վրա, Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը չի խախտել Ադրբեջանի Հանրապետության ամբողջականությունը: Այդ Հանրապետությունն է, որ փորձել է խախտել ԼՂՀ ամբողջականությունը՝ ընդունելով աղտոտիչի որոշում ԼՂԻՄ-ը վերացնելու եւ նրա տարածքը բռնագավթելու մասին: Պնդել հակառակը խարդավանք է:

4. Քանի որ Ադրբեջանի Հանրապետությունը դեռեւս բռնագրավված ունի ԼՂՀ տարածքի զգալի մասը (Շահումյանի շրջանը, Մարդակերտի ու Մարտունու շրջանների զգալի մասերը), ինչպես նաեւ հայկական բոլոր այն անկլավները, որոնք պատմականորեն միշտ էլ պատկանել են Արցախին, ԼՂՀ-ը դե յուրե ճանաչելուց հետո պետք է կատարել փոխանակումներ ադեկվատ հաստատուն երաշխիքներ մի քանի ուղղությամբ: ԼՂՀ-ին վերադարձնել 1991 թ. սեպտեմբերի 2-ին նրա պատշաճեցրած հայտարարած տարածքը, որի դիմաց Ադրբեջանի Հանրապետությունը



Ադրբեջանական Հանրապետությանը, որը միայն 80 տարի առաջ է հայտնվել պատմության մեջ:

6. Նույնը պետք է ասել նաեւ Լաչինի մասին: «Միջանցքն» այստեղ ստեղծվել է դարիս 20-ական թվականների վերջին, «Կարմիր Քուրդիստան» խորամանկ գործարքի միջոցով, երբ խաբելով եւ քրդերին, եւ հայերին, սարքել են օտար բնակիչներով զբաղեցված մի շերտ, որով Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզն անջատել են Հայաստանից, իսկ հետո էլ այստեղ բերված քրդերին են մերժել նախապես նրանց խոստացած այսպես կոչված ինքնավարությունը:

Հայերը դե ֆակտո վերստացել են իրենց Այուդինի մարզի Քաշաթաղ գավառը եւ անհրաժեշտ է օրինականացնել կատարվածը՝ դե յուրե, ապա նրա պատշաճությունը դարձնել Հայաստանի եւ Արցախի բանակների սրբազան պարտականությունը:

7. Հազիվ թե հարկ կա Ադրբեջանի Հանրապետությանը վերադարձնելու նաեւ Քելբաջարի շրջանը[1]: 1993 թ. նա չցանկացավ վերստանալ փոխարենը խաղաղություն շնորհելով Ղարաբաղին: Թող ինքն իրենից նեղանա: Քելբաջարի մասին խոսք պիտի գնա այն իմաստով, որ փոխարենը հայերին վերադարձվեն մի քանի տասնյակ բնակավայրեր Գեշաշենից մինչեւ Արծվաշեն, որոնցից դուրս են քշվել ավանդական հայ բնակիչները, իսկ գյուղերին էլ կոչրել են թուրքական անուններ: Այդ գյուղերը դժվար թե երբեւէ վերադարձվեն իրենց տեր հայերին: Դրա համար էլ անհրաժեշտ է հաշվի առնել, որպես Ադրբեջանի կողմից այդ կորստի փոխհատուցում, Քելբաջարի, Լաչինի, գուցե նաեւ Աղդամի, Կուբաթլիի ու Զանգելանի տարածքները: Եվ իսկապես էլ ինչո՞ւ ոչ այդպես: Բանակցությունների ժամանակ կշեռքի վրա պիտի դրվեն ամեն ինչ եւ անվտանգության շահերը, եւ պատմական հիմքերը, եւ այդ տարածքները դարեր շարունակ զբաղեցրած բնակչության էթնիկական կազմը, եւ, իհարկե, տարածքները:

1. Ծանոթագրություն. Քելբաջար, եկվոր հոչվորներն այսպես են աղավաղել Արցախի Ծար գավառի Քարավաճառ ավանի անունը (Մատենադարանի թիվ 3578 ձեռագրի էջ 293 բ. «Եւ կատարեցաւ սայ ի թուականութեանս հայկազեան տաւմարի ութհարիւրերորդի յիսներորդի առաքներորդի ամի (1402), ի հայրապետութեանն Հայոց եւ Աղուանից երկոցունց տերանց Կարապետ կոչեցելոց... յարհեպիսկոպոսութեան այսմ նահանգիս տէր Զաքարիայի Ղադի վանաց... ի հռչակաւոր երկիրս Ծար ի գեղս Քարաւաճառ...»). Քարավաճառ է կոչվել այն պատճառով, որ այստեղ են արտադրվել ամբողջ Կովկասում ու շրջականերում վաճառվող ջրաղացքարերը: 18-րդ դարում արցախ-սյունիական ազգային-ազատագրական պայքարին հարված հասցնելու համար պարսից շահն ու նրա կամակատարները Ծարում ու Քաշաթաղում հոչվոր հոլանիներ բնակեցրին՝ սեղ խրելով Արցախի ու Սյունիքի միջեւ: Տասնամյակներ ետո 19-րդ դարի սեսերին Հասան-Ջալալյան միտրոպոլիտ (Արցախի հոգեւոր առաջնորդ) Բաղդասարը, ցարական կառավարության աջակցությամբ դաս բացելով, գործը շահեց եւ Ծար-Քարավաճառն ազատագրեց իբրեւ Ղադի վանքի կալվածք-սեփականություն: Բաղդասար միտրոպոլիտն իր կյանքի ամենածանր ու ամենադաժան գործերից մեկն է համարել Ղադիվանք-Խութավանքի անհուն հարստության ազատագրումը հուրդ ու հոլանի եկվորներից: Սրանց ավազակաբարո մեծավորները, որ նստած էին վանքի հողերի վրա, պատրաստ էին արնախում ոհմակների զորությամբ պաշտպանել իրենց չունեցած իրավունքն այն հողերի վրա, որոնց տիրացել էին նստակեցության դարձած հոչվորի բիրտ ուժով: Սակայն Բաղդասար միտրոպոլիտն այն կովողը չէր, որ կանգ առներ որեւէ արգելքի առաջ: Այս առթիվ Ներսես Աշտարակեցի կաթողիկոսին գրած նամակներից մեկում խոստանում էր ամեն տեսակ զժվարություն հաղթահարել, գործի դնել ամեն միջոց, «չխնայել ոչ ծախսարարութիւն ինչ եւ ոչ յայլաստեսակ աշխատութիւն... ես պատրաստ եմ միշտ յամենայն զորութեն եւ ի բովանդակ մտաց գուն գործել, կորզել ի ձեռաց բռնակալաց զամենայն վանքապատկան կալուածս որդիսի եւ իցէ եղանակով»: Նա հոգատարությամբ է հաղորդում իր թափած ջանքերը Ղադիվանք-Խութավանքի համար («զամենայն աշխատութիւն եւ ջերմեռանդ փոյթ իմ վասն կալուածոց խոթայ վանիցն, յորոց մասին պատրաստ եմ մինչեւ ցկեցս վախճանի») (Լեո, պատմություն Ղարաբաղի թեմական դպրոցի. Թիֆլիս, 1914, էջ 139): Իսկ այս վանքի կալվածքների ազատագրությունից հետո էլ մտմտում էր հաջորդ ազգաշեն ծրագրերը, որոնց մեջ առաջին տեղում էր ազատագրված հողերի բնակեցումը նոր ավանդական տեսքով: Եվ այդ էր նրա վերջին բաղձանքներից մեկը, որ տեղ գտավ նրա հայտնի կտակի մեջ՝ գտնում էր որ միայն Ղադի-Խութա վանքի կալվածքներում (այժմյան Քարավաճառ-Քելբաջարի շրջանում) կարելի է եւ պետք է բնակեցնել 2000 գյուղական ընտանիք (ծանոթագրությունը թարգմանչի):

8. Փախստականների հարցը պետք է լուծվի տարածքների փոխանակման հետ պայմանավորված: Հիմնահատակ խորտակված բնակավայրերում ոչ ոք չի աղրելու: Առանց վիթխարի կապիտալ ներդրումների անհնար էլ է ոտքի կանգնեցնել դրանք: Քանի որ Ադրբեջանից դուրս են արվել ավելի քան երեք անգամ ավելի հայեր, քան ադրբեջանցիները Հայաստանից ու Լեռնային Ղարաբաղից (500 հազար՝ 160 հազարի դիմաց), իսկ Լեռնային Ղարաբաղի բանակի վերահսկողության տակ գտնվող ադրբեջանական շրջանները՝

9. Ղարաբաղյան ժողովրդի ինքնորոշման բնական իրավունքի քաղաքական լիակատար կարգավորումն այն հիմունքներով, որոնք նրան հնարավորություն կտան ստեղծելու իր ազգային պետությունը, որը նա արդեն իրականացրել է, միակ խելացի ու արդար ելքն է այն բարդույթից, որ գոյացել է ադրբեջանական քաղաքական կլանների անբավարար քաղաքակրթվածության եւ «մանր բռնատիրական» ձգտումների հիմքի վրա: Այդպիսի ելքը համապատասխանում է նաեւ Ադրբեջանի Հանրապետության այն ժողովուրդների շահերին, որոնք հեռանկար կունենան բավարարություն ստանալու իրենց ազգային բաղձանքներին, որոնք մինչեւ այժմ դաժանորեն ճնշվել են այդ հանրապետության ղեկավարության կողմից:

10. Այդպիսի կարգավորումը շահավետ կլինի նաեւ Ադրբեջանի բնակչության թուրք մեծամասնության համար, որը կազատվի իր զավակների կյանքի համար չդադարող սարսափից եւ կստեղծի իր խաղաղ, բարեկարգ կյանքը՝ լեռնային, կովկասյան շրջապատի հետ համատեղ: Ամեն ինչ կախված կլինի նրանից, թե Ադրբեջանի Հանրապետության ղեկի մոտ կանգնած դասը կունենա՞ բավարար բանականություն, քաղաքակրթվածություն եւ մարդասիրություն՝ ամենից առաջ սեփական ժողովրդի հանդեպ...

Իսկ եթե միջազգային միջնորդները այդպես շատ են փափագում անկախ Արցախին տոգորել «ամենալայն ինքնավարությամբ» Ադրբեջանի Հանրապետության կազմում, ապա նրանց իբրեւ պարտադրանք կարելի է առաջարկել այսօրինակ զարգացումներ՝ իսկ ինչո՞ւ նրանք նույն կարգավիճակը չեն առաջարկում Նախիջեւանին՝ Հայաստանի կազմում: Կտեսնե՞ս, որ արցախցիները գոհ են հավասարակշռող առաջարկությունից: Թե չէ, բոլորը մի դարպասի վրա է գնում՝ իմը՝ իմն է, բայց ոնն էլ՝ իմն է:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Միջազգային

Կիրակի օրը Այուինֆենում անցկացրած մամլո ասուլիսում ԱՄՆ-ի պաշտպանության նախարար Ուիլյամ Քոհենը հայտարարել է, թե Իրաքի բռնապետ Սադդամ Հուսեյնը սպախոս է Քոհենը նկատի ունի Սադդամի այն պնդումները, թե Իրաքը զանգվածային ոչնչացման զենքեր չունի: Մինչդեռ, ըստ ամերիկյան հետախուզության տվյալների, Բաղդադն իր տրամադրության տակ իսկապես ունի կենսաբանական եւ բակտերիոլոգիական մարտագլխիկներով հրթիռներ, որոնք խիստ գաղտնի են պահվում ՄԱԿ-ի փորձագետներից: Դրանք գտնվում են Հուսեյնի անձնական նստավայրերում, ուր ՄԱԿ-ի փորձագետների մուտքն արգելված է: Քոհենն ասել է, թե իր ձեռքի տակ կան այդ հրթիռների լուսանկարները, բացի այդ, նույն բանը հաստատել է իրաքյան բանակի մի փախստական սպա, որը երկար ժամանակ եղել է այդ հրթիռները սպասարկող զինվորական անձնակազմի անդամ:

Ըստ ռուսական աղբյուրների հաղորդումների, մոսկովյան բարձրագույն շրջանակներում նույնպես չեն կասկածում, թե Սադդամն այդպիսի զենք ունի: Ռուսաստանի արտգործնախարար Եվգենի Պրիմակովը հայտարարում էր, թե Բաղդադը պարտավոր է ենթարկվել միջազգային հանրության կամքին, բացել բոլոր գաղտնի օբյեկտների դռները միջազգային տեսուչների առաջ եւ լիովին ոչնչացնել հիշյալ հրթիռները: Մի քանի եւ այստեղ Մոսկվայի եւ Վաշինգտոնի դիրքորոշումները բացարձակապես համընկնում են: Սակայն պաշտոնական Մոսկվան վճռականորեն դեմ է արտահայտվում խնդիրը Ծոցի նոր պատերազմով լուծելու ամերիկյան կեցվածքին: Եվ այստեղ նրա տեսակետը պաշտպանում են ավելի ու ավելի մեծ թվով պետություններ: Չինաստանը, Ֆրանսիան, Ճապոնիան, Ինդոնեզիան, էլ չխոսելով ողջ արաբական աշխարհի մասին, ներառյալ Սաուդյան Արաբիան, որն ԱՄՆ-ի դաշնակիցն է, բայց արգելել է իր տարածքում գտնվող ռազմական հենակայաններն օգտագործել Իրաքին օդային հարված հասցնելու համար:

Խնդիրը ուժով լուծելու կողմնակից են միայն Անգլիան եւ Իսրայելը: Մասնակիորեն սրանց կարելի է միացած համարել նաեւ Թուրքիային, որն արդեն իսկ համաձայնել է իր տարածքում գտնվող հենակայաններից Իրաքը ռմբակոծելու գաղափարին:

ԻՐԱՔ

Չարագուշակ ամպեր տարածաշրջանում

ՌՈՅԵՏ-ԱՐՍԵՆՅԵՎ

Այս ամենը չափազանց պայթյունավտանգ իրավիճակ է ստեղծել տարածաշրջանում: ԱՄՆ-ը Ծոցի շրջանում կենտրոնացրել է վիթխարի արմադա: Հենց միայն ամեն տեսակ ռազմաօդային ինքնաթիռների թվաքանակը երկու օր առաջվա տվյալներով հասնում էր 375-ի: Այդ ուժի մեծագույնը կոտրանարար կարող է լինել Իրաքի ժողովրդի եւ պետության համար: Սա ինչու Սաուդյան Արաբիայի թագավորի եղբայրը հայտարարել է, թե իրենք «թույլ չեն տա» այդ հարվածը: Սակայն հարցը միայն Իրաքը չէ, որի ժողովուրդը դարձել է իր բռնապետի արկածախնդրական քաղաքականության իսկական պատանդը ամբողջ 7 տարի անասելի զրկանքներ կրելով երկրի նկատմամբ իրականացվող միջազգային պատժամիջոցներից: Որոշ տվյալներով, ամեն օր Իրաքում հարյուրավոր երեխաներ են մեռնում սովից ու անհրաժեշտ բուժօգնության բացակայությունից: Եվ իրողությունն այն է, որ միջազգային պատժամիջոցները ուղղվում են ոչ թե բռնապետի, այլ ժողովրդի դեմ, որը նոր պատերազմի դեպքում կարող է ուղղակի «ոտքի տակ կորչել»: Սակայն հարցը միայն իրաքյան ժողովրդի ողբերգության մեջ չէ: Պատերազմական գործողությունները, սկսվելու պարագայում, կարող են նմանվել այն ծնագնդին, որը լեռնալանջից իջնելով ու ահագնանալով իր ճանապարհին կործանում է ամեն ինչ: Նկատի ունեմ պատերազմի հնարավոր ծավալումը այլ երկրների տարածք: Չուր չէ, որ Թուրքիայի պաշտպանության նախարարը Ստամբուլում լույս տեսնող «Զումհուրիեթ» ազդեցիկ թերթում անհերկմիտ հայտարարել է, թե «ԱՄՆ-ը չի բավարարվի միայն մեկ գործողությամբ»: Ակնարկը, անշուշտ, ուղղված է Իրանին: Եվ Իրանի պաշտպանության նախարարը անմիջապես արձագանքել է, թե «Իրանը ոչ մեկի թույլ չի տա խախտել իր օդային սահմանները»:

Այս ամենը խիստ մտահոգիչ է: Լարվածության հետագա մեծացումը կարող է իրոք մեծ պատերազմի տեղիք տալ եւ, ասված մի առաջ, նրա մեջ Իրանի ներքաշման դեպքում մենք հանկարծ կարող ենք հայտնվել ամենակործան հրդեհի անմիջական հարեւանի վիճակում: Բացի այն, որ զուտ որպես մարդ անհաղորդ չեմ կարող մնալ Իրաքի եւ բարեկամ Իրանի ժողովուրդների գլխին կախված մահացու վտանգների նկատմամբ, չեմ կարող [illegible] հանգստանալ մեզ սպառնացող հնարավոր աղետներից: Ուստի կարծում եմ, որ Հայաստանը, իբրեւ ՄԱԿ-ի անդամ եւ տարածաշրջանային պետություն, պետք է միանա այն պետությունների խմբին, ովքեր պահանջում են առաջացած կնճիռը հարթել առանց պատերազմի, զուտ դիվանագիտական բանակցությունների միջոցով:

Հարկավոր է ցրել այն չարագուշակ ամպը, որը կարող է ծածկել նաեւ մեր երկինքը:

ՌԱՖԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Գրոզնի. Ցուցարարները անվստահություն են հայտնել Չեչնիայի ղեկավարությանը

ԳՐՈԶՆԻ, 9 ՓԵՏՐՎԱՐ, ՍՆՍՐՔ- Փետրվարի 7-ին Գրոզնու կենտրոնում կայացած ցույցի ժամանակ Սալման Ռադուեւի կողմնակիցները որոշում են ընդունել «քաղաքացիական անվստահություն» հայտնել Չեչնիայի նախագահին եւ կառավարությանը:

Ինչպես ցույցի ժամանակ հայտնեց Ռադուեւը, դա «մեղմ ձեւակերպում է», քանի որ նախագահն ու կառավարությունը հանդես են եկել իր կողմնակիցների պահանջներին «պատասխան քայլով»: Այդ կապակցությամբ նա նշել է փետրվարի 6-ի Սալման Մասխադովի ելույթը տեղական հեռուստատեսությամբ, երբ նախագահը հայտնեց Մոսկվայից չեչենական խորհրդարանի ներկայացուցիչներին հետ կանչելու մտադրության մասին: Ռադուեւի խոսքերով, ի պատասխան դրան իր կողմնակիցները պատրաստ են հրաժարվելու «քաղաքացիական անհնազանդության» ակցիայից, սակայն այդ որոշումը վերջնական չի լինելու: Նա պնդում էր, թե «իր կողմնակիցների մեթոդները ներառում են ոչ թե ռազմական ճանապարհը, այլ բողոքի զանգվածային ակցիաների միջոցով ճնշումը»: «Մենք իշխանության չենք ձգտում եւ չենք պատրաստվում ռազմական հեղաշրջում կատարել, հայտարարեց Սալման Ռադուեւը: Ն[illegible]ա խոսքերով, «Մասխադովը անուն առ անուն գիտի մարդկանց առեւանգմամբ զբաղվող խմբավորումների ղեկավարներին»: Ռադուեւը նախագահին կոչ արեց մինչեւ փետրվարի 14-ը հայտնել նրանց անունները կամ էլ հանրության առաջ երդվել, որ դրանք իրեն հայտնի չեն: Այդ դեպքում, ինչպես հայտարարեց Ռադուեւը, ինքը պարտավորվում է պատգուցել, «որ դրանք մարդիկ են նախագահի շրջապատից»:

Ցույցի մասնակիցները պահանջեցին մեկ շաբաթյա ժամկետում սկսել սոցիալական հիմնախնդիրների լուծումը վճարել թոշակները, նպաստները եւ աշխատավարձը: Ն[illegible]ա խոսքերով, «[illegible]ությունից պահանջեցին նաեւ օրենք ընդունել «աշխատանքի տարալման համար կառավարության պատասխանատվության մասին»

Աշխատելու համար Լատվիայում պարտադիր է լատիշերենի իմացությունը

6 ՓԵՏՐՎԱՐ, BBC: Լատվիայի խորհրդարանը՝ Սեյմը հավանություն տվեց մի օրենքի, որը տնօրեններին հնարավորություն է ընձեռում աշխատանքից ազատել այն բանվոր-ծառայողներին, ովքեր բավարար չափով չգիտեն լատիշերեն: Ավելին, այսպես կոչված «լեզվական տեսչությունը» կարող է պահանջել որ հեռացվեն լատիշերեն վատ խոսողները: Ընդ որում նաեւ նրանք, ովքեր լատիշերենի իմացությունը հավասող վկայականներ ունեն: Այդպիսիներին լեզվական տեսչությունը իրավունք ունի կրկնակի քննության ենթարկելու հենց աշխատատեղում: Եվ Այլապես տեսչությունը իրավունք ունի տնօրենին դատական պատասխանատվության ենթարկելու: Օրենքն ընդունող պատգամավորները համարում են, որ Լատվիայի անկախացումից անցել է 7 տարի եւ բոլոր նրանք, ովքեր մտադիր են աշխատել այդ երկրում, պարտավոր են գիտենալ լատիշերեն: Իսկ օրենքին դեմ քվեարկողները համարում են, որ սկսվում է «լեզվական ահաբեկչություն» եւ լեզվական տեսուչները կարող են տորթելու հնարավորություն են ստացել:

ԱՇԽԱՐՀ

Հարավոր է երեք սլավոնական պետությունների երկարաժամկետ պայմանագիր

ՄԻՆՍԿ, 7 ՓԵՏՐՎԱՐ, ՍՆՍՐՔ- Ուկրաինայի վարչապետ Վալերի Պուստովոյտենկոն, որը այցով գտնվում է Բելառուսում, մոտ ապագայում հնարավոր է համարում Բելառուսի, Ռուսաստանի եւ Ուկրաինայի միջեւ տնտեսական համագործակցության եռակողմ երկարաժամկետ պայմանագրի ստորագրումը:

Նախօրեին Մինսկում ելույթ ունենալով ամփոփիչ մամուլի ասուլիսում, նա հայտնեց Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոյի հետ Բելառուսի եւ Ուկրաինայի միջեւ տասը տարվա համար նախատեսված տնտեսական համագործակցության ծրագրի նախապատրաստման վերաբերյալ ձեռք բերված համաձայնության մասին: Դա նման կլինի Ուկրաինայի եւ ՌԴ միջեւ կնքված համաձայնությանը: Հեռանկարում, ասաց նա, անհրաժեշտ է երեք սլավոնական պետությունների՝ Ուկրաինայի, ՌԴ, Բելառուսի միջեւ համագործակցության եռակողմ պայմանագիր ստորագրել: Մամուլի ասուլիսին մասնակցած Բելառուսի վարչապետ Սերգեյ Լինգը լիովին պաշտպանեց այս առաջարկները, ընդգծելով, որ պետք է հեռանալ «պատահական տնտեսական ցփումներից դեպի համագործակցության երկարաժամկետ համակարգի»:

Կիպրոսում նախագահական ընտրությունների երկրորդ փուլը փետրվարի 15-ին

ՆԻԿՈՍԻԱ, 9 ՓԵՏՐՎԱՐ, ՍՐՍԵՆՊՐԵՍ- Կիրակի օրը Կիպրոսի Հանրապետությունում կայացած նախագահական ընտրություններում 7 թեկնածուից ոչ ոք չկարողացավ ստանալ ընտրողների քվեների 50 տոկոսից ավելին, որն անհրաժեշտ է ընտրվելու համար:

ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի հաղորդման համաձայն, հայտնի են դարձել պետական բարձրագույն պաշտոնի այն երկու հավակնորդների անունները, որոնք փետրվարի 15-ին կբարունակեն պայքարը քվեարկության երկրորդ՝ վճռական փուլում: Նրանցից մեկը երկրորդ հնգամյա ժամկետով վերընտրվել ձգտող նախագահ Գլավկոս Քլերիդեսն է, իսկ մյուսը՝ քաղաքական հայտնի գործիչ, նախկին արտգործնախարար Գեորգիոս Յակովուն: Երկուսն էլ զգալիորեն առաջ էին անցել մնացած հինգ մրցակիցներից, իսկ նրանց միջեւ ընտրողների քվեների տարբերությունը սոսկ 0,5 տոկոս է: Առջեւում Յակովուն է քվեների 40,6 տոկոսով, իսկ Քլերիդեսն ստացել է 40,1 տոկոսը: Այժմ Սահմանադրության համաձայն նրանցից ով ավելի շատ քվեներ կստանա գալիք կիրակի օրը, նա էլ կդառնա պետության ղեկավար:

Քլերիդեսը եւ Յակովուն ձեւականորեն անկախ թեկնածուներ են: Բազմափորձառու պետական գործիչ եւ երկրորդ աշխարհամարտի հնամարտիկ 78-ամյա Քլերիդեսին առաջադրել է ժողովրդավարական հավատ կառավարող աջ կուսակցությունը, իսկ ընտրարշավի ընթացքում արագ «թափ առած» 60-ամյա Յակովուին պաշտպանում են կառավարական կոալիցիայի գծով ժողովրդավարական հավատի նախկին գործընկեր աջ ցենտրիստական ժողովրդավարական կուսակցությունը եւ կիպրոսցի կոմունիստները: Կիպրոսի աշխատավոր ժողովրդի առաջադիմական կուսակցությունից: Հանգուցային շատ հարցերում, ներառյալ Կիպրոսի կարգավորման խնդրում, այդ երկու քաղաքագետների դիրքորոշումները մոտ են:

Իսլամական համաժողով կազմակերպությունը իրաքյան ճգնաժամի խաղաղ լուծման օգտին

ԱԲՈՒ ԴԱԲԻ, 9 ՓԵՏՐՎԱՐ, ՍՆՍՐՔ- Իրաքյան ճգնաժամի խաղաղ լուծման կոչով են հանդես եկել Իրանի նախագահ Մոհամեդ Խաթամին եւ Իսլամական համաժողով կազմակերպության գլխավոր քարտուղար Էքմելդին Լարակին՝ այսօր Թեհրանում տարածած համատեղ հայտարարության մեջ: Իրանը 55 իսլամական երկիր միավորող համաժողովի նախագահն է: Ինչպես նշվում է փաստաթղթում, Խաթամին գլխավոր քարտուղարին հանձնարարել է մասնակցելու իրաքյան ճգնաժամի լուծման միջազգային համագործակցության քաղաքական ջանքերին եւ կանխել նրա դեմ ուժի գործադրումը:

Արգենտինան կոպաշտպանի ռազմական գործողությունն ընդդեմ Իրաքի

ԲՈՒԵՆՈՍ ԱՅՐԵՍ, 9 ՓԵՏՐՎԱՐ, ՍՐՍԵՆՊՐԵՍ- Արգենտինան կոպաշտպանի ԱՄՆ-ի ռազմական գործողությունն ընդդեմ Իրաքի նույնիսկ այն դեպքում, եթե ՄԱԿ-ը համաձայնություն չընդունի: Ըստ ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի, այդ մասին կիրակի օրը հայտարարել է արգենտինական պետության ղեկավար Կարլոս Մենեմը տեղական մամուլի թղթակիցների հետ կայացած հարցազրույցի ժամանակ: Արգենտինայի ղեկավարի կարծիքով, Իրաքի դեմ զենք գործադրելը չի հանգեցնի երրորդ համաշխարհային պատերազմի սկսվելուն, որի մասին վերջերս իր հայտարարության մեջ նախազգուշացրել էր Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինը: Միեւնույն ժամանակ Մենեմը խոստովանել է, որ Պարսից ծոցում հնարավոր զինված բախումը «լուրջ կլինի»:

Հռոմի պապը հրավիրվել է Թուրքիա

Ըստ «Թըրքիշ Դեյլի Նյուզ» պարբերականի, Թուրքիայի նախագահ Սուլեյման Դեմիրելը պաշտոնական հրավերի ուղերձ է հղել Հովհաննես Պողոս Բ պապին՝ վերջինիս համար «հարմարագույն ժամանակ»: Թուրքիայի նախագահը ասել է, որ պապի այցելությունը կարող է համընկնել 2000 թվականին Հիսուսի ծննդյան տարեդարձի նախօրեին՝ դրանով նոր էջ բանալով Վատիկան-Անկարա հարաբերություններում: Նշելով, թե Անատոլիան միշտ եղել է քաղաքակրթությունների օրրան, Դեմիրելն ընդգծել է, որ Թուրքիան ապագայում եւս պատրաստ է կատարել վերջիններիս ներդաշնակման դերը:

«ԵՐԵՎԱՆ»

Նոր երկրաշարժ Աֆղանստանում

ԴԵԼԻ, 9 ՓԵՏՐՎԱՐ, ՍՐՍԵՆՊՐԵՍ-ԻՏԱՌ ՏԱՍՍ: Անցած կիրակի օրը եւս մի երկրաշարժ է տեղի ունեցել Աֆղանստանի հյուսիսային շրջաններում, որի ուժգնությունը ըստ Ռիխտերի սանդղակի եղել է 4,5 բալ: Տարեբային աղետի շրջանից այսօր տարաբնույթ տվյալներ են ստացվում զոհվածների եւ ավերների մասին: Որոշ տեղեկությունների հարեւծայն, նոր երկրաշարժի հետեւանքով շուրջ 250 մարդ է զոհվել: Այն էլ ավելի է դժվարացրել փրկարար աշխատանքները Թահարի նահանգում, որտեղ փետրվարի 4-ին 6,1 բալ ուժգնության (ըստ Ռիխտերի սանդղակի) մի [illegible] տարերկրյա ցնցումների հետեւանքով 4000-ից ավելի բնակիչ էր զոհվել:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մշակույթ

Չարենցապատումի մասյան

Ավարտվել է «չարենցյան տարին», ցավոք սրտի, ոչ մեր ժողովրդի ավանդական հոգեկառուցվածքին եւ ոչ էլ բանաստեղծի մեծագույն գրական ժառանգությանը վայել շնչառությամբ, այլ բազում ու տարաբնույթ միջոցառումների շռուական մակարդակով, եւ այսօր, 1998-ին, հազիվ թե որեւէ մեկի հուզաշխարհում լուսավոր կես լինի երեկվա այդ օրերից, թանկ հիշողություն, գրական ու մտավոր արծագանք, թերեւս սակավ բացառությամբ Տիգրան Մանսուրյանի «չարենցյան երգաշարի» եւ մեկ-երկու գիտական հրաարակումների, որոնք կարող էին իրականանալ նաեւ «տարելիցից» դուրս նրանից առաջ կամ հետո: Այս ցանկում ամենանշանակալիցը բանասիրական գիտությունների դոկտոր Ալմաս Զաքարյանի «Եղիշե Չարենց. կյանքը, գործը, ժամանակը» 1000 մեծադիր էջեր ընդգրկող ուսումնասիրությունն է, որն օրերս լույս է ընծայել Հայաստանի ԳԱԱ հրատարակչությունը, զարմանալի (չասեմ զայրացուցիչ) տպաքանակով ընդամենը 500, այսինքն գրական շատ նեղ շրջանակի համար, երբ գրքի բովանդակությունը շոշափում է տարբեր լայն ընթերցողի հետաքրքրությունները:

Ալմաս Զաքարյանի անունը հիմնավորապես կապվել է Չարենցի ստեղծագործությանն ու կյանքին ավելի, քան ուրիշ որեւէ գրականագետի, նրա տասնամյակների քրտնաջան բանասիրական, գրականագիտական ու տեսական դրդռումների շնորհիվ, որոնք ծանրակշիռ արժեք են ներկայացնում 60-ական թվականներին նա միայնակ պատրաստեց ու ծանոթագրեց Չարենցի երկերի առաջին ամբողջական ու գիտական հրատարակության հինգ հատորները, որոնք բարենպաստ հողդարձան չարենցագիտության ստեղծման ու հիմնավոր զարգացման համար: Այս հիմքով գրվեցին բազմաթիվ ուսումնասիրություններ, նաեւ Ա. Զաքարյանի կողմից, որոնցում եղիշե Չարենցը «հեղափոխության երգչի» սահմանափակ շրջանակից թեեւ ուշ, բայց ոչ ուշացած հանվեց եւ վերադարձվեց հարազատ ժողովրդին, նրա ողբերգական պատմությանը: Այսօր չարենցագիտությունը գիտական շատ լուրջ ասպարեզ է աբովյանագիտության, ռաֆֆիագիտության, թումանյանագիտության, շիրվանզադեագիտության, իսահակյանագիտության, տերյանագիտության կողքին, այս շրջանում, գուցե եւ, առաջին օղակներից իր խորքի ու լայնքով, եւ այստեղ Զաքարյանի նոր աշխատասիրությունը ոչ թե ինչ-ինչ լրացումներ է անում, այլ հուշում, նշագրում, պեղում ու բացում զարգացման նոր ուղիներ միսված հայ ժողովրդի մշակութաբանությանն ու ճակատագրին անցյալ-ներկա-գալիք համապարփակ կտրվածքով:

Գիտության այս ճյուղերը մեկ գրողին չեն վերաբերում միայն, այլ նրա ստեղծագործության ու կյանքի մեծ շառավղի շնորհիվ, գրական ընդարձակ շրջափուլերի, գրական զարգացմանը, աշխարհայացքին, գեղագիտական ըմբռնումների փոխակերպությանը եւ այլն, եւ տվյալ գրողի ազգային արմատներով, նաեւ պատմությանն ու պատմության դասերին: Այդպես է նաեւ Չարենցի դեպքում: Ա. Զաքարյանի գիրքն արտացոլում-վերլուծում է եւ առանձնահատուկը Չարենցի կյանքն ու գործը, եւ ընդհանուրը նրանով զուգահեռվող գրական ու պատմական կարեւոր երեւույթներ:

Դեռեւս «XX դարի սկզբի հայոց բանաստեղծությունը» ուսումնասիրության երկու գրքերում (1973 թ. եւ 1977 թ.) Զաքարյանն ուրվագծեց արեւելահայ ու արեւմտահայ մեծանուն պոետների, նրանց ստեղծագործական ճանապարհի առանձնահատկությունները, ինչ ավանդներ են շարունակել նրանք, որակական ինչ նոր կուտակումներ արել հայ գրականության մեջ, նրանց առնչությունները համաշխարհային գեղարվեստական մտայնությունների հետ, որքանով, փաստորեն, ավելի, քան ուրիշ որեւէ գրող, ժառանգեց Չարենցը, հարստացնելով, նրանց հաղորդելով իր նույնքան ողբերգական օրերի ու ճակատագրի շունչն ու ոգին:

Այս հատորում Չարենցի գործը, մինչեւ 1922 թվականը ներառյալ, քննվում է թե հայրենական եւ թե համաշխարհային պոեզիայի բարձրագույն չափանիշներով եւ ցույց տրվում այն լուսավոր-ողբերգական գագաթները, որոնք իմաստավորված են նրա բացառիկ մեծ ու խոր հուզաշխարհի ներկայությամբ: Այստեղ հատկապես հետաքրքիր են Չարենցի ստեղծագործական հարազատության բացահայտումները Տերյանի, Շանթի, ռուսական ու արեւմտյան մոդեռնիզմի հետ, նրա եւ լեհ գրողներ Պոիբիշեւսկու ու Սենկեւիչի, ընդհանրապես լեհականության զուգահեռները, նրա եւ հայ գրականության եվրոպական կողմնորոշումների առաջադրությունները, որոնք վկայում են դարասկզբյան հայոց գրականության եւ Չարենցի բուռն հոգեղեն ալեկոծումների մասին: Եվ չափազանց արժեքավոր մի ընդհանրացում. «...Հայոց բանաստեղծությունը համառ նպատակաուղղվածությամբ կոչված էր ծառայելու մարդկային անձնականության, մարդ անհատի բարձրագույն արժեքայնության վերհանմանը» (էջ 107): Սա հատկապես արժեքավոր է մեզանում գերակշռող սոցիոլոգիական վերլուծումների համեմատությամբ, որոնք նվաճում են հասարակական կյանքը, բայց կորցնում ամենագլխավորը՝ մարդ անհատին, որն իսկապես գրականության ու արվեստի բարձրագույն արժեքայնությունն է:

Ալմաս Զաքարյանի այս գիրքը հարուստ է Չարենցի կյանքի մանկության ու պատանեկության Կարս ծննդավայրի, ուսումնառության ճանապարհների, նրա տոհմածառի, եղեռնական տարիների նորահայտ վավերական դրվագներով, որոնք բազում արխիվներում, պարբերական մամուլի խունացած հավաքածուներում, հուշագրություններում ու նամակներում, ականատեսների վկայություններում հեղինակի երկարամյա (դեռեւս 50-ական թվականների վերջից, երբ նա պատրաստում էր «Երկերի ժողովածուն») համառ որոնումների արդյունք են: Չարենցը «փողոցային աշտարակում» փակված բանաստեղծ չէր նույնիսկ սիմվոլիստական երգերում, այլ ելնում էր իր փոքրկահույզ կյանքից, իսկ այդ կյանքի խոռվքները ժողովրդի ճակատագրով, սեւ-մութ իրականությամբ եւ նույնքան մութ ու անորոշ ժամանակով էին պայմանավորված: Ահա թե ինչու «կյանքի» այդ ծանոթ ու նորահայտ էջերը բանալի ու դուռ են նրա ստեղծագործական աշխարհին, 20-րդ դարի հայոց գրականության այդ ամենահերոսական սիմֆոնիային, եւ եթե հերոսականությունը պլակաս չէ (սղանիչ ծուղակ միջակությունների համար) ուրեմն՝ ողբերգությանը: Գրքի նորությունն ու գլխավոր արժանիքներից մեկը, որ չարենցագիտության հետագա զարգացման ուղիներ է հուշում, այս վավերականությունն է Չարենցը ողբերգական կյանքի քառուղիներում:



Երեւի թե մենագրության ժանրի լավագույն «կաղապարը» կյանքը-գործը-ժամանակը եռանկյունին է, որը հնարավորություն է տալիս ներկայացնել գրողին բոլոր էական կողմերով: Սրա համոզիչ վկայությունն է նաեւ Զաքարյանի աշխատությունը: Ասեմ, սակայն, որ ամեն, թեկուզ եւ մեծ, գրող այս հնարավորությունը հետազոտողին չի ընձեռում, նա, իր գեղարվեստական ստեղծագործությանը զուգահեռ, երբեմն նրա մեջ, պիտի ունենա նաեւ իր երեւելի «կյանքը» եւ պատմականորեն ծանրակշիռ «ժամանակը»: Չարենց երեւույթը հենց այսպիսին է: Նրա «ժամանակը» այս գրքում 20-րդ դարասկզբի երկու եղերական տասնամյակներով, երբ ամեն հայի շուրթերին Համլետի ճակատագրական հարցն էր հոլովվում, լուծված էր նրա երկերում, ինչպես աղը ծովում, եւ այս ստեղծագործությունների անհատական ողբերգական ծնունդն ու գոյությունը դարձնում է առավել ողբերգական: Ա. Զաքարյանի ամբողջ գիրքն էլ «կյանքի», «գործի» ու «ժամանակի» գրականագետի բարձր գիտակցությամբ, վարպետորեն հյուսված շարադրանք է եւ ցուցադրում է Չարենցի դուրսն ու ներսը, լայնքն ու խորքը, խոշոր ծավալներն ու մանրամասները, նրա գրական եւ ազգային առաքելությունը, որն ունի նշված եռանկյունուց առավել հզոր հնչեղություն, քանզի խոսում է հոգու եւ պոեզիայի բառով:

Չեմ կարող չնշել եւս մի կարեւոր հատկանիշ, որ բացակայում է շատ մենագրություններում՝ ոչ թե պատմողական-նկարագրական, այլ գիտական պատմականությունը: Ալմաս Զաքարյանի գիրքը ճշմարիտ կողմնորոշումներ է հուշում դարասկզբի հասարակական, ազգային, քաղաքական կյանքով զբաղվող մեր պատմաբաններին:

Սա չարենցաղատումի մասյան է, բայց եւ դարասկզբյան հայոց գրականության պատմություն եւ հեղինակի ընկալմամբ, եւ ժամանակաշրջանի գրականության դաշտում Չարենցի պոեզիայի տարածած նոր ու կենսական արմատներով, առանց որոնց անհնարին է անգամ երեւակայել այդ դաշտի սահմանները ու դիմագիծը:

1922-ը մասյանի վերջին թվականն է: Հետեւաբար սպասվում է չարենցաղատումի հաջորդ, գուցե եւ երրորդ հատորը համեմատաբար ազատ 20-ականների եւ հավատաննչական 30-ականների շրջափուլերում 1937 ահասարսուռ թվականով: Սակայն այս առաջին գիրքն արդեն ամբողջական պատկերացում է տալիս երիտասարդ Չարենցի մասին, նշագրում նրա գալիք տարիները եւ յուրահատկորեն խոսում բանաստեղծի երկրորդ հայրենիքի հետ:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՂԱՅԱՆ

ՄԵՐ ԱՐՎԵՍՏԱԳԵՏՆԵՐԸ

«Ազգ»-ի ցուցասրահ

Խաչիկ Հովհաննիսյանի գեղանկարչությունն ավելի ծիշ է ներկայանում ու ընկալվում հայեցի ու քրիստոնեական արվեստի շրջանակներում: Նրա կերտարները միջնադարյան հայ մանրանկարչության զարմից են, նրա կտավների շունչը անցյալի ու ներկայի բնական ռիթմը պահող իրողություն է: Մեր հայացքի դեմ պարզ ու անմեղ աչքերով անցյալից ապագային են նայում աստվածային ու մարդկային պատվիրաններով ապրող մարդիկ: Իր միջավայրն ու աշխարհը ստեղծած արվեստագետի հայացքը լռությամբ մատնացույց է անում հավերժական ասելիքով լցված իրերի ու երեւույթների խորքը:

ԱՐԵՎՇԱՏ ԱՎԱԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ-ՉԻՆԱՍՏԱՆ

Համագործակցությունը կծավալվի

Երկու երկրների մեջ ստորագրեց նոր պայմանագիր

Մեր երկրի անկախացումից հետո, Հայաստանի Հանրապետությունում Չինաստանի Ժողովրդական Հանրապետության դեսպանատան միջնորդությամբ կապեր հաստատվեցին արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի եւ համագործակցության հայկական ընկերության (ԱՕԿՍ) եւ արտասահմանի հետ բարեկամության չինական ժողովրդական ընկերակցության միջեւ: Մեկ տարի առաջ չինական կողմը Հայաստանի պատվիրակությանը հրավիրեց Չինաստան համագործակցության վերաբերյալ բանակցություններ վարելու: Ֆինանսական դժվարությունների պատճառով հնարավոր չեղավ ճանապարհորդությունը դեպի Չինաստան իրականացնել: Մեկ տարի անց միայն 1998 թվականի սկզբին հովանավորների աջակցության շնորհիվ իրագործվեց այցելությունը: Արտասահմանյան մշակութային կապերի եւ համագործակցության հայկական ընկերության եւ «Հայաստան-Չինաստան» ընկերության պատվիրակությունը ԱՕԿՍ-ի փոխնախագահ Հասմիկ Պողոսյանի ղեկավարությամբ: Չինաստանում եղավ ընթացիկ տարվա հունվարի 16-24-ը: Այդ իրադարձության վերաբերյալ զրուցեցինք պատվիրակության ղեկավար Հասմիկ Պողոսյանի հետ:

– Չինական ժողովրդական Հանրապետության եւ Հայաստանի Հանրապետության միջեւ, ասաց նա, բարեկամական շփումների լայնացման եւ խորացման, առեւտրատնտեսական, գիտատեխնիկական, մշակութային, լուսավորչական, սպորտի, առողջապահության, զբոսաշրջության եւ այլ ասպարեզներում երկու երկրների համագործակցության եւ ակտիվ փոխանակման նպատակով ԱՕԿՍ-ը եւ արտասահմանի հետ բարեկամության չինական ժողովրդական ընկերությունը, միաձայն համաձայնեցին ստորագրել 1998-1999 թթ. համագործակցության համաձայնագիր:

– Տիկին Պողոսյան, ավելի մանրամասն՝ համաձայնագրի էության մասին:

– Կողմերը, համագործակցության ծրագրերի եւ նրանց կատարման ընթացքի պարբերական քննարկումների նպատակով, երկու տարին մեկ անգամ կփոխանակեն մեկական աշխատանքային պատվիրակություն (5-7 անձ) մեկ շաբաթ ժամկետով: Փոխանակությունների իրագործման շրջանակում կնպաստեն եղբայրացած քաղաքների կապերի ամրապնդմանը: Կստեղծեն պայմաններ արդյունաբերական ձեռնարկությունների եւ առեւտրատնտեսական կառույցների համագործակցության համար, կկազմակերպվեն գործարար շրջանների գործիչների եւ մասնագետների փոխայցելություններ:

– Հայաստանի պատվիրակության այցելությունը Չինաստան սահմանափակվեց միայն համագործակցության համաձայնագրի կնքումո՞վ:

– Ո՛չ միայն դրանով: Չին գործընկերները մեզ ծանոթացրին իրենց մեծ երկրի տնտեսության, գիտության, մշակույթի եւ այլ բնագավառի նվաճումներին: Եղանք մշակութային օջախներում, արդյունաբերական ձեռնարկություններում, ծանոթացանք տնտեսական զարգացման ազատ գոտու հետ: Հավանության արժանացան մեր առաջարկները հայ-չինական համատեղ ձեռնարկություններ ստեղծելու մասին՝ հատկապես գորգագործության եւ տեքստիլ արդյունաբերության ասպարեզներում:

– Չինաստանի ո՞ր տարածաշրջաններ այցելել հայկական պատվիրակությունը:

– Մենք հիմնականում եղանք երկրի մայրաքաղաք Պեկինում եւ Տյան Տին քաղաքում:

– Չինաստանի արտաքին քաղաքականության ոլորտում ի՞նչ կշիռ ունի արտասահմանի հետ բարեկամության Չինական ժողովրդական ընկերությունը:

– Չինաստանի արտաքին քաղաքականության իրականացման գործում, Չինական ժողովրդական ընկերությունը երկրորդ տեղում է՝ երկրի արտգործնախարարությունից հետո: Այն հասարակական հիմունքներով գործող պետական կառուցվածք է եւ ունի 200 աշխատող: Ընկերության գրասենյակը գտնվում է մայրաքաղաք Պեկինի կենտրոնում, որը մասնաճյուղեր ունի ամբողջ երկրով մեկ:

Ի հավելումն ԱՕԿՍ-ի փոխնախագահի հետ զրույցի պատվիրակության անդամ «Հայաստան-Չինաստան» ընկերության պատասխանատու քարտուղար Աննա Էգիբյանն ավելացրեց, որ Չինաստանում ինքն առաջարկել է ստեղծել «Չինաստան-Հայաստան» ընկերություն: Առաջարկությունն ընդունվել է գոհունակությամբ: Նաեւ Չինաստանում Հայաստանի Հանրապետության դեսպան Ազատ Մարտիրոսյանն ընդունել է հայկական պատվիրակությանը եւ խոստացել նպաստել համագործակցության համաձայնագրի կենսագործմանը:

Պայմանագրի մեկ օրինակը հանձնվել է դեսպանին:

ՏՈՒՇԻՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ՆԱԳԱՆՈ-98

18-րդ ձմեռային օլիմպիական խաղերի բացումը

Շաբաթ օրը փետրվարի 7-ին, ճապոնիայի Նագանո քաղաքում տեղի ունեցավ 18-րդ ձմեռային օլիմպիական խաղերի հանդիսավոր բացումը:

Այդ գեղեցիկ տոնակատարությանը ականատես եղան ոչ միայն հատուկ այդ նպատակի համար կառուցված Սինամի մարզադաշտում հավաքված 50 հազար հանդիսականները, այլեւ շուրջ 160 երկրների ավելի քան 2 մլրդ հեռուստադիտողներ:

Ճապոնացիները բավականին հետաքրքիր նորամուծություններ էին արել: Տարբեր աշխարհամասերի քաղաքներում Նյու Յորքում, Բեռլինում, Պեկինում, Քեյփթաունում եւ Սիդնեյում երգչախմբերը կատարում էին Բեթհովենի 9-րդ սիմֆոնիայի «Ուրախության ներբողը»: Եվ այդ կատարումներին ականատես էին ոչ միայն հեռուստադիտողները, այլեւ Սինամիում հավաքվածները: Մարզադաշտում ելույթներ ունեցան հինավուրց երկրի արվեստի ներկայացուցիչները: Շատ հուզիչ էր նշանավոր երգչուհի եւ հասարակական գործիչ Ռիկո Սորիյամայի եւ մի մեծ խումբ փոքրիկների կատարումները:

Այնուհետեւ սկսվեց մասնակիցների շքերթը: Սիա հերթով մարզադաշտ են մտնում Անդորրայի, Արգենտինայի, Հայաստանի մարզիկները: Իհարկե, մեզ համար հատկապես հուզիչ էր մեր հանրապետության ներկայացուցիչների հայտնվելը: ...Եվ այսպես, օլիմպիադայի մասնակից 72 երկրների մարզիկները տեղ են գրավում մարզադաշտում:

Ելույթ է ունենում Նագանայի օլիմպիադայի կազմկոմիտեի նախագահ Էյսիհո Սայոն: Նա շնորհակալություն է հայտնում մարզական ղեկավարություններին, որ Նագանո են այցելել, բազմաթիվ կամավորներին, որոնք օգնել են իրենց: Նա նշում է, որ օլիմպիական սկզբունքներից հիմնականը սերն է: սերը սպորտի, մարզիկների, երեխաների, երկրի նկատմամբ: Սայոն ավելացնում է, որ աղագայում եւս սպորտը պետք է ներդաշնակ լինի բնության հետ: Պետք է անաղարտ պահել բնությունը:

Այնուհետեւ ներկաներին ողջույնի խոսքով դիմեց ՄՕԿ-ի նախագահ Խուան Անտոնիո Սամարանչը: Խոսելով օլիմպիական իդեալների մասին, Սամարանչը արժանին մատուցեց բարոն Պիեռ դը Կուբերտենին, քանի որ նրա շնորհիվ սկիզբ դրվեց ժամանակակից օլիմպիզմին:

«Ալիգաստա, Նագանո, ալիգաստա Ճապոնիա» (շնորհակալություն, Նագանո, շնորհակալություն, Ճապոնիա), իր խոսքը ճապոներենով եզրափակեց ՄՕԿ-ի նախագահը: Այնուհետեւ Ճապոնիայի կայսր Ակիհիտոն 18-րդ ձմեռային օլիմպիական խաղերը հայտարարեց բացված:

Օլիմպիական կրակը ձեռքին, փոքրիկ երեխաներով շրջապատված, մարզադաշտ է վազում Զիս Մունը: Նա Մոզամբիկում, ականի պայթյունից կորցրել է թեւն ու ոտքը: Այս երիտասարդ անգլիացին այժմ աննախադեպ մարտահրավերներ հանդիսանալով շարժման մասնակիցներից է: Այնուհետեւ կրակը փոխանցվում է 1996 թ. Ատլանտայի օլիմպիադայի մարաթոնյան վազքի չեմպիոնուհի Հիրոմի Սուզուկիին: Նա վազում է աստիճաններով վեր եւ ջահը հանձնում գեղասահորդուհի 1992 թվականի Ալբերվիլի օլիմպիադայի փոխչեմպիոնուհի, Միդորի Իտոյին: Նա էլ վառում է 18-րդ օլիմպիական խաղերի գլխավոր ջահը:



Խաղերի բացմանը մեծ հետաքրքրություն հաղորդեցին ճապոնական ազգային ըմբշամարտի սումոյի ներկայացուցիչների ելույթները: Նկարում՝ նրանցից ամենանշանավորը՝ Ակիբոնոն

Նագանոյի օլիմպիական մրցաադարեզներում

18-րդ ձմեռային օլիմպիադայի առաջին չեմպիոնուհի դարձավ ռուս դահուկորդուհի Օլգա Դանիլովան, որն առաջին տեղը գրավեց 15 կմ մրցաարածության դասական ոճով դահուկավազքում: Արծաթե մեդալը նվաճեց նրա թիմակցուհի Լարիսա Լազուտինան, բրոնզե պարգեւը բաժին հասավ Անիտա Սոեն Գուիդոնին (Նորվեգիա):

Շատերի համար 27-ամյա Դանիլովայի հաջողությունը անսպասելի էր, քանի որ զույգ տղաների ծնվելու պատճառով նա բաց էր թողել 95/96 թթ. մրցաշրջանը, իսկ անցյալ տարի աչքի չէր ընկել խոշոր մրցումներում: Ինչպես հայտարարեց չեմպիոնուհին, իր հաղթանակը նվիրում է որդիներին:

Տղամարդկանց 30 կմ դասական ոճի դահուկավազքում օլիմպիական չեմպիոնի կոչումը նվաճեց 28-ամյա Միկա Մյուլյլյան (Ֆինլանդիա), արծաթե մեդալակիր դարձավ Նորվեգիայի ներկայացուցիչ Էռլինգ Եվենն, իսկ բրոնզե պարգեւ շահեց իտալացի Սիլվիո Ֆաուները:

Օլիմպիադան հարուստ է անակնկալներով: Դրանցից մեկը գրանցվեց բիաթլոնի կանանց 15 կմ մրցաարածությունում: Չեմպիոնուհու կոչումը նվաճեց բուլղարուհի Եկատերինա Դալովսկան, որն առաջ անցավ Ելենա Պետրովայից (Ուկրաինա) եւ Ուրսուլա Դիգելից (Գերմանիա), որոնք նվաճեցին համապատասխանաբար արծաթե եւ բրոնզե մեդալներ:

Անհաջող հանդես եկան ֆավորիտները, մասնավորապես Ռուսաստանի բիաթլոնիստուհիները:

Նագանոյի օլիմպիադայում առաջին անգամ անցկացվում են մրցումներ սնոուբորդից (հատուկ տախտակով ոլորավայրէջք): Իհարկե, առաջին չեմպիոնի անունը հատուկ տեղ կգրավի օլիմպիադաների պատմության մեջ:

Հսկա ոլորավայրէջքի մրցումներում ոսկե մեդալ նվաճեց 26-ամյա կանադացի Ռոսս Ռեբագլիանին: Հետաքրքիր է, որ առաջին փորձից հետո նա 8-րդ տեղում էր ընթանում: Սակայն երկրորդ փորձի ժամանակ նա գերազանցեց բոլոր մրցակիցներին եւ գրավեց առաջին տեղը: Օլիմպիական չեմպիոնին ընդամենը 0,02 վայրկյանով զիջեց Թոմաս Պրուգերը (Իտալիա):

Չափազանց բարձր արդյունքներ գրանցվեցին չմկկավազքի տղամարդկանց 5000 մ մրցաարածությունում:

Աշխարհի ռեկորդը նախ գերազանցեց Լիլեհամերի օլիմպիական չեմպիոն Բարտ Վելդկամպը (Բելգիա): Սակայն նա միայն բրոնզե պարգեւի արժանացավ, քանի որ ավելի բարձր արդյունքներ ցույց տվեցին հոլանդացիներ Ռենե Ռիսսման (արծաթ) եւ Զաննի Ռոմմեն (ոսկի): Վերջինս օլիմպիական չեմպիոն դարձավ չափազանց բարձր արդյունքով՝ 6 ռոպե, 22,2 վրկ:

Երեք օրվա մրցումներից հետո չեմպիոններ են դարձել 6 թիմերի ներկայացուցիչներ: Մեկական ոսկի եւ արծաթ են նվաճել Ռուսաստանի եւ Հոլանդիայի մարզիկները: Մեկ ոսկի եւ երկու բրոնզ գերմանացիներ: Մեկական ոսկե մեդալ են վաստակել Բուլղարիայի, Ֆինլանդիայի եւ Կանադայի ներկայացուցիչները:

Օլգա Դանիլովան եւ Լարիսա Լազուտինան

ՇԱԽՄԱՏ

Առաջատարների եռյակը նույնն է

Ավարտին է մոտենում Թեհրանում անցկացվող շախմատի միջազգային մրցաշարը: Առանց պարտության է շարունակում խաղալ երեւանցի գրոսմայստեր Աշոտ Անասասյանը: Նա շահել է երեք պարտիա, վեց հանդիպում ավարտել է խաղաղ արդյունքով եւ, 9 հնարավորից վաստակելով 6 միավոր, առյուսակը գլխավորում է բրիլիսցի միջազգային վարպետ Գիորգի Բագատուրովի եւ ԶԻԴԵ-ի վարպետ Մոհսեն Ղորբանիի (Իրան) ընկերակցությամբ:

Միջազգային վարպետ Մելիխսեթ Խաչիյանը վաստակել է 4,5 միավոր:

Մինչեւ եզրագիծը մնացել է երկու տուր:

Գ. Հ.

ԻՐԱՆ

Ավանդական մրցումներում

Իրանում անցկացվում են հեղափոխության տարեդարձին նվիրված «Արեւածագի 10 օրը» անվանմամբ ավանդական մրցումները: Դրանց մասնակցում են նաեւ մեր հանրապետության մարզիկները:

Որոշ մարզաձեւերում մասնակիցներն ավարտել են պայքարը: Արդեն երեւան են վերադարձել Հայաստանի բադմինտոնի հավաքականի անդամները:

Ինչպես հայտնեցին ՀՀ սպորտվարչության լրատվության բաժնից, Իրանի բադմինտոնի կենտրոն դարձած Ջանջան քաղաքում անցկացված մրցումներին մասնակցել են 9 թիմերի 48 տղամարդ եւ 28 կին մարզիկներ: Մեր բադմինտոնիստներից առավել հաջող են հանդես եկել Ռուզան Հակոբյանն ու Ալվարդ Հովսեփյանը, որոնք հասել են կիսաեզրափակիչ եւ ի վերջո բաժանել 3-4-րդ տեղերը: Կանանց զուգախաղերում մեր այս երկու մարզուհիները գրավել են 5-րդ տեղը: Հայաստանի մեկ այլ՝ Մարիամ Մուրադյան-Արփինե Հայրապետյան զույգը գրավել է 6-րդ տեղը: Այնպես էլ հաջող չեն հանդես եկել մեր հանրապետության տղաները:

Շաբաթ օրը Իրան մեկնեցին Հայաստանի 10 բռնցքամարտիկներ՝ հավաքականի գլխավոր մարզիչ Ալեքսանդր Սարգսյանի գլխավորությամբ:

Հաջորդ օրը բռնցքամարտիկների օրինակին հետեւեցին մեր թեթեւատլետները, որոնք Ռաշտ քաղաքում կայանալիք մրցումներում հանդես կգան ութ մրցաձեւերում: Հավաքականի ղեկավարները հատկապես մեծ հույսեր են կապում հեռացատկորդներ, կապանցի Մերուժան Սարգսյանի, արտաշատցի Վալիկ Սահակյանի, երեւանցի եռացատկորդ Պարգեւ Գրիգորյանի հետ:

Երեկ Թեհրան մեկնեց նաեւ մեր սուպերամարտիկների խումբը, որը հիմնականում երիտասարդ մարզիկներով է համալրված: Նրանք հանդես կգան բրամարտի եւ ծկասուսերի մրցումներում:

ԲՈՒՏՋՔԱՍՄԱՐՏ

Կմասնակցեն ընտրական մրցումներին

Մայիս ամսին Բելառուսի մայրաքաղաք Մինսկում կանցկացվի Եվրոպայի հերթական առաջնությունը: Այդ կարեւոր սուզաստեսին մասնակցելու իրավունք արդեն ունեն Հայաստանի յոթ բռնցքամարտիկներ: Այդ թիվը կարող է ավելանալ, քանի որ մեր մարզիկները դեռ պետք է մասնակցեն ընտրական մրցումներին:

Դրանցից մեկը կանցկացվի Ստամբուլ քաղաքում: Այդտեղ հանդես կգան մեր երկու բռնցքամարտիկները՝ երեւանցի Տիգրան Հակոբյանը (63,5 կգ քաշային կարգում) եւ աբովյանցի Գագիկ Անտոնյանը (71 կգ):

Մարտի 3-ին սկսվող ընտրական մեկ այլ մրցաշարում հանդես կգա երեւանցի Մխիթար Վանեսյանը (75 կգ):

Նախապատրաստվում են կարեւորագույն ստուգատեսներին

Փետրվարի 6-24-ը Ճապոնիայի օլիմպիական մարզաբազայում ուսումնամարզական հավաք կանցկացնեն ծանրամարտի հանրապետության մեծահասակների եւ երիտասարդական հավաքականները: Հավաքի 24 մասնակիցները Օգսեն Միրզոյանի ղեկավարությամբ կնախապատրաստվեն մրցաշրջանի կարեւորագույն ստուգատեսներին:

Մեծահասակ ծանրորդները հանդես կգան ապրիլի 26-ից մայիսի 5-ը գերմանական Ռիգա քաղաքում անցկացվելիք Եվրոպայի առաջնությանը:

Իսկ մի խումբ մարզիկներ կմասնակցեն աշխարհի երիտասարդական առաջնությանը, որը կանցկացվի Բուլղարիայի մայրաքաղաք Սոֆիայում, մայիսի 17-26-ը:

Մրցեցին երիտասարդներն ու դպրոցականները

Ճաղկաձորում անցկացվեց դահուկավազքի Հայաստանի երիտասարդական եւ դպրոցական առաջնությունը: Մրցումներին մասնակցեցին Երեւանի, Գյումրիի, Վանաձորի, Հրազդանի, ԶԻՄՄ-ի ներկայացուցիչ 88 դահուկորդներ:

Թիմային մրցաշրջանում հաղթեցին Գյումրիի մարզադպրոցի սաները:

Անհատական մրցումներում հատկապես աչքի ընկավ Հրազդանի ներկայացուցիչ, ֆիզկուլտուրայի ինստիտուտի ուսանող Արմեն Եղիազարյանը: 19-ամյա մարզիկը հաղթեց 20 կմ ազատ ոճով եւ 15 կմ դասական ոճով մրցումներում:

Արարատյան հայրապետական թեմը հրավիրում է նորապսակներին

Տյառնընդառաջի տոնի առիթով Արարատյան հայրապետական թեմը քաղաքամայր Երեւանի եկեղեցիներում եւ Նորքի, Մալաթիայի, Արաբկիրի Հայոց դպրոցներում փետրվարի 13-ին ժամը 17-ին առաջին Տյառնընդառաջը նշող նորապսակների համար կազմակերպում է օրհնության հանդիսավոր հատուկ արարողություն: Հետ արարողության նորապսակները մտերմիկ հանդիպում եւ զրույց կունենան հոգեւոր հովիվների հետ:

Մասնակցել ցանկացող նորապսակներին խնդրում ենք մինչեւ փետրվարի 13-ը գրանցվել հիշյալ եկեղեցիներում եւ Հայոց դպրոցներում:

ՍՍՍԼՈ ԴԻՎԱՆ ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄԻ

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
4 սենյականոց բնակարան (Դավիթաշեն, II թաղամաս, 3-րդ շենք, բն.4):
Զանգահարել 72-89-83

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
4 սենյականոց բնակարան 115/70 քմ, Չարենցի 52, 3 հարկանի քարե շենքի 2-րդ հարկում:
Հետ.՝ 55-66-56

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
2 սենյականոց բնակարան, Ֆրունզեի փ. շենք 6, 34 բն., 5 հարկանի շենքի 5-րդ հարկում:
Հետ.՝ 44-97-40, 58-1[illegible]-41
(«Հայրենիք» կինոթատրոնի մոտ):

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
3 սենյականոց բնակարան Նորքի V զանգ.
հետ. 64-93-89, 64-88-85

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Օրվա հետքով

ՕՏԱՐ ՍԱՍՈՒԼ

Սեփականացումը կշարունակվի անկախ ներքաղաքական իրավիճակից

Հայաստանի ներքաղաքական կյանքի վերջին փոփոխությունները շարունակում են մնալ օտար երկրների լրատվական միջոցների ուշադրության կենտրոնում: Գործարար շրջաններում հանրաճանաչ «Ուոլ սթրիթ ջոռնըլի» փետրվարի 6-ին տպագրված նյութը անդրադառնում է այս անգամ ֆինանսների նախարար Արմեն Դարբինյանի խոսքերին եւ սեփականաշնորհման հարցերին:

«Վարչապետ Ռոբերտ Քոչարյանի հայտնվելը որպես ամենաազդեցիկ մարդը Հայաստանի վերջին շաբաթվա իրադարձությունների շղթայում հույս է ներշնչում, որ այս փոքր երկրի տնտեսության սեփականաշնորհումը կշարունակվի: Պրն Քոչարյանը տնտեսական բարեփոխությունների եւ սեփականաշնորհման ամենաեռանդուն ջատագովն է», նշել է, ըստ թերթի տվյալների, Արմեն Դարբինյանը (33 տարեկան), որին վստահվել է առաջ տանել երկրի նահանջ ապրող տնտեսությունը, որտեղ աշխատուժի 50 տոկոսը լավագույն դեպքում բերծանրաբեռնված է աշխատանքով: Նա փորձել է ցրել տնտեսության անկայունության վերաբերյալ օտարերկրացիների վախը: Կառավարությունը նոր թաք. է հաղորդել սեփականաշնորհման գործընթացին, հայտնել է նա, նշելով, որ երեք հյուրանոց, էլեկտրոնային արտադրամասեր եւ երկրի հոչակավոր կոնյակի գործարանը սեփականաշնորհման առաջիկա ցուցակում են: Դրանց հաջորդելու Ն. ըստ լրատվության. երեւանի օդանավակայանը. «Հայկական ավիաուղիները», օդանավակայանի սպասարկման ծառայությունները: էլեկտրաարդյունաբերության եւ բաշխման համակարգերը արդեն իսկ պատրաստ են վաճառվելու այս տարվա ընթացքում որպես առանձին ընկերություններ: «Էլեկտրաէներգիայի օգտագործման դիմաց մուծումները այժմ կազմում են 85 տոկոս, որն ամենամեծ ցուցանիշներից է նախկին խորհրդային Միությունում», ավելացնում է պրն Դարբինյանը:

Թերթն այնուհետեւ նշում է, որ պետության եկամուտները եռապատկվել են անցյալ տարի շնորհիվ հարկերի ավելի խիստ հավաքման եւ բանկերում ներդրումները կրկնապատկվել են՝ հասնելով 100 միլիոն դոլարի: Բայց չնայած բյուջեի դեֆիցիտը նախանցյալ տարվա 9.3 տոկոսից անցյալ տարի նվազել է 6.7 տոկոսի, փոքի արժեզրկումը եռապատկվել է եւ հասել 21.9 տոկոսի:

ՀԱՅԱՏՔ ԳՐՍԻՑ

«Նյու Յորք թայմզը» լավատես չէ խաղաղության հեռանկարների նկատմամբ

«Հայաստանի իրականությունը» վերնագրով խմբագրական հոդված է տպագրել «Նյու Յորք թայմզ» օրաթերթը երեկ: Նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի հրաժարականը Կովկասում խաղաղության եւ ազգամիջյան ներդաշնակության տեսակետից «անհանգստացնող զարգացում» որակելուց հետո, թերթը գրում է, որ սեպտեմբեր ամսին Մ. Նահանգների, Ֆրանսիայի եւ Ռուսաստանի կողմից ճնշման ենթարկվելով, նա իր համաձայնությունը տվեց Լեռնային Ղարաբաղի հարցում խաղաղության հասնելու համար անհրաժեշտ զիջումներ անելուն: Այդ զիջումներն ընդվզեցրին նրա կառավարության կարծրթեւային անդամներին եւ ներխորհրդարանական կոալիցիային, ինչը ստիպեց նրան հրաժարական ներկայացնել:

«Պրն Տեր-Պետրոսյանն արդեն իսկ անժողովրդական էր, գրում է թերթը: Դրա պատճառը 1996 թ. նրա ընտրական հաղթանակի նկատմամբ կասկածներն էին: Սակայն նրա խաղաղության ծրագիրը, որը շատ հայերի կողմից դիտվում էր որպես անձնատվություն, իրապաշտական միակ լուծումն էր ղարաբաղյան հակադրության»: Ըստ թերթի, Տեր-Պետրոսյանի հրաժարականը հարցականի տակ է դնում 1994 թ-ին հաստատված հրադադարի ճակատագիրը: Նրա հրաժարականը, միաժամանակ, պատասխանատվություն է իշխանությունը այն զինվորական եւ ոստիկանական խմբակի, որի զորախմբերը ծեծել էին անցյալ ընտրություններում խարդախության դեմ բողոքողներին:

«Ղարաբաղյան հարցի կարգավորման հովանավորները եւ գլխավորաբար Մոսկվան, գրում է թերթը, պետք է համոզեն Հայաստանի նոր ղեկավարներին, որ Լեռնային Ղարաբաղին ինչ-որ ձեւի ինքնավարություն, բայց ոչ անկախություն տվող համաձայնությունը միակ հնարավորությունն է իրենց երկրին անհրաժեշտ կայունությունն ու խաղաղությունն ապահովելու համար»:

Խմբագրականը միջազգային խմբերին կոչ է անում մարտի 16-ի ընտրություններին մոբիլիզացնելու իրենց ջանքերը, քանի որ ընտրական նոր խարդախությունները կխարխլեն Հայաստանի արդեն իսկ երերացող ժողովրդավարությունը:

Վերջում «Նյու Յորք թայմզը» եզրակացնում է. «Սակայն նույնիսկ մարտի ընտրություններով անհավանական է, որ ընտրվի մի նախագահ, որն ուզենա խաղաղության համար անհրաժեշտ զիջումների գնալ»:

Ըստ Գոբլի՝ ԵԱՀԿ-ի ճնշումն էր Լ. Տեր-Պետրոսյանի մեկուսացման պատճառը

ԵՐԵՎԱՆ, 9 ՓԵՏՐՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ «Ազատություն» ռադիոկայանի վերլուծաբան Պոլ Գոբլի կարծիքով, ՀՀ նախագահ Տեր-Պետրոսյանի հրաժարականը վկայում է, որ որեւէ երկրի նկատմամբ ճնշում գործադրելու միջազգային համայնքի հնարավորությունները բավական սահմանափակ են: ԵԱՀԿ եռանախագահների առաջարկությունները հակադրում էին Հայաստանին ճանաչելու լիսաբոնյան սկզբունքները: «Տեր-Պետրոսյանը փորձում էր առարկել, պատճառաբանելով, թե ընտրազանգվածը կմերժի այդ ծրագիրը, բայց Մինսկի խմբի ճնշումը ավելի էր հզորանում, եւ Տեր-Պետրոսյանը ասիճանաբար տեղի էր տալիս: Արեւմուտքը նրան ողջունում էր, իսկ հայրենիքում նա ասիճանաբար մեկուսացվում էր»: Ըստ Գոբլի, այժմ իրավիճակը մի կողմից ավելի պարզ է դարձել, քանի որ բոլորին հայտնի է Քոչարյանի եւ նրա առաջնորդների դիրքորոշումը: Մյուս կողմից Հայաստանում կատարվածից անհրաժեշտ է դաս քաղել, այն է հասկանալ, որ միջազգային ճնշումները արդյունավետ չեն լինում, եթե հաշվի չի առնվում զանգվածների տրամադրությունը: «Տեր-Պետրոսյանը պատրաստ էր համագործակցելու Մինսկի խմբի հետ, բայց այդ խումբը պատրաստ չէր աջակցելու Հայաստանի նախագահին», ասել է վերլուծաբանը:

Ըստ Ֆրանսպրեսի, մի թուրք դիվանագետ ասել է, թե իր երկիրը չի ողջունում Տեր-Պետրոսյանի հրաժարականը, բայց Թուրքիան հուսով է, որ Հայաստանն ու Ադրբեջանը կփորձեն համաձայնության հասնել Ղարաբաղի հարցում:

Ժիրինովսկին տարանցիկ ճանապարհով Երեւանում

Սկիզբը էջ 1

Անդրադառնալով Հայաստանի ներքաղաքական իրավիճակին, ուրախությամբ է նշել, որ փոփոխությունները կատարվում են սահմանադրորեն, եւ դեմոկրատական ճանապարհով իշխանության են գալիս նոր քաղաքական կուսակցություններ: Միաժամանակ ցանկություն հայտնեց, որ նոր իշխանություններն ընտրվեն ժողովրդավարական ճանապարհով, առանց կեղծիքների, եւ որ նոր նախագահը լինի հայ ժողովրդի սիմվոլը, որը պատասխանի նրա ազգային շահերը, չգնա որեւէ փոխզիջման, քանի որ հայ ժողովուրդը ապրանք չէ, որի մի մասը կարելի է նվիրել, իսկ մյուս մասը վարձով տալ: «Այսօր ուրիշ ժամանակներ են եւ ուրիշ պատմություն, եթե խոսվում է մարդու մասին, ապա պետք է պաշտպանել բոլորի իրավունքները, այդ թվում հայերի, որոնք ապրում են ՀՀ-ում, Արցախում, Նախիջեւանում եւ Արեւմտյան Հայաստանում, որը գտնվում է Թուրքիայի տիրապետության տակ», ընդգծել է Ժիրինովսկին:

Օրվա ընթացքում ՀՀ-ում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանատնից տեղեկացան, որ Իրանը հանդես է եկել հայտարարությամբ, որում ասված է, թե ինքնաթիռների ուղղորդման հարցում Իրանը տվել է իր սկզբունքային համաձայնությունը անհրաժեշտ օգնություն ցուցաբերելու համար եւ հաշվի առնելով Իրանի տարածքում ինքնաթիռների թռիչքի արգելման առկա կարգը, պահանջել է ՄԱԿ-ի հատուկ թույլտվությունը թռիչքի իրականացման համար: Նաեւ ՄԱԿ-ում Իրանի ներկայացուցչությանը կոչ է արել ջանք չխնայել այս թույլտվության ստացման ուղղությամբ: Նշվել է, որ պատասխանական թեհրանը լիովին պատրաստ է ՄԱԿ-ի համաձայնության դեպքում իր օդային տարածքը տրամադրել ռուսական օժանդակությունն առաքող ինքնաթիռին:

Հաշվի առնելով Իրանի ծանր կացությունը, ժողովրդի, հատկապես երեխաների մարդասիրական օգնության կարիքը, ԻԻՀ-ը կրկին պատասխանություն է հայտնել ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի եւ Իրանի դեմ բռնարգելքի հանձնախմբի որոշումների շրջանակներում օժանդակել նման օգնությունների առաքմանը եւ դիմել է ՄԱԿ-ի Իրանի դեմ բռնարգելքի հանձնախմբի ղեկավարությանը ինքնաթիռի թռիչքի թույլատրելու համար:

ԵՐԵՎԱՆ

100-150 մլն դրամ կառավարության պահուստային ֆոնդից նախագահական ընտրությունների համար

ԵՐԵՎԱՆ, 9 ՓԵՏՐՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ. Քանի որ այս տարի նախատեսված չէին նախագահական ընտրություններ, այդ նպատակով բյուջեն հատկացումներ չէր նախատեսել: Սակայն քաղաքական զարգացումները բերեցին նրան, որ առաջիկայում Հայաստանում անցկացվելու են նոր նախագահական ընտրություններ, հետեւաբար պետությունը որոշակի գումարներ պետք է ծախսի այդ նպատակով: Ըստ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարար Արմեն Դարբինյանի, այդ գումարները կտրամադրվեն կառավարության պահուստային ֆոնդից: Հատկացումների ծավալը դեռ պարզ չէ, ներկայում բանակցություններ են ընթանում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի հետ, որը պետք է կազմի նախահաշիվ: Նախարարի կարծիքով, դա կլինի 100–150 մլն դրամի սահմաններում:

Սերգեյ Բաղայանը՝ հանրապետության նախագահի պաշտոնի թեկնածու

ԵՐԵՎԱՆ, 9 ՓԵՏՐՎԱՐ, ՍՆԱՐՔ: Անցած կիրակի կայացած ՀՀ ԿԿ կենտկոմի նստաշրջանը փետրվարի 7-ի երեւանյան ցույցի ժամանակ առաջ քաշված ՀՀ ԿԿ պարագլուխ Սերգեյ Բաղայանի թեկնածությունը հաստատեց որպես մարտի 16-ի նախագահական ընտրություններում պետության նախագահի պաշտոնի հավակնորդ: Ինչպես հայտնեց ՀԿԿ մամլո քարտուղար Ռոբերտ Սահարոնյանը, Բաղայանի թեկնածությունը պետք է հաստատվի նաեւ սույն տարվա փետրվարի 11-ին բացվող կոմկուսի արտահերթ նստաշրջանում:

Վարդգես Դավթյանն ազատվեց «Հայքի» խմբագրի պաշտոնից

Շաբաթ օրը տեղի ունեցած ՀՀՇ վարչության նիստում կազմակերպության նախագահ Վանո Սիրադեղյանի առաջարկությամբ «Հայք» պաշտոնաթերթի գլխավոր խմբագիր Վարդգես Դավթյանն ազատվել է աշխատանքից: Այս մասին պրն Դավթյանը երեկ կայացած խմբագիրների հետ մի այլ առիթով հանդիպման ժամանակ բացատրեց, որ ՀՀՇ վերջին համագումարում Վանո Սիրադեղյանի գլխավորությամբ իշխանության եկած ռեֆորմատորների խումբը վերջին օրերին, ՀՀ նախագահի հրաժարականից հետո, կուսակցության ներսում տեղի տվեց «ավանդապահների» առաջ, որի արդյունքում բնական էր, որ իրեն պաշտոնից հեռացնեին որպես ռեֆորմատորի: Հիշեցնենք, որ պրն Դավթյանը «Հայքի» խմբագիր էր նշանակվել 1997 թ. հոկտեմբերին:

Մյուս կողմից, տեղեկանում ենք, որ «Հայքի» պաշտոնաթերթի խմբագիր է նշանակվել լրագրող Նելլի Գրիգորյանը:

Մամուլը կնպաստի նախագահական ազատ եւ արդար ընտրություններին

ԵՐԵՎԱՆ, 7 ՓԵՏՐՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ

Մամուլի ազգային ակումբը փետրվարի 7-ին հանդես է եկել հայտարարությամբ, որում ասված է.

«Արձանագրելով, որ Հայաստանում այսօր չորրորդ իշխանությունը այն սակավաթիվ ժողովրդավարական հաստատություններց է, որ կայացել է եւ էական ազդեցություն ունի հանրապետությունում ծավալվող հասարակական եւ քաղաքական գործընթացների վրա, Մամուլի ազգային ակումբը հայտարարում է, որ գործադրելու առավելագույն ջանքերը մարտի 16-ին կայանալիք նախագահական արտահերթ ընտրությունների ընթացքը վերահսկելի եւ թափանցիկ դարձնելու համար՝ նպաստելով ազատ եւ արդար ընտրությունների կայացմանը:

Մամուլի ազգային ակումբը կոչ է անում իր գործընկերներին լինել առավելագույնս անաչառ եւ հաստատակամ իրենց մասնագիտական եւ բարոյական պարտքը կատարելիս»:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Փետրվարի 12-ին (հինգշաբթի), ժամը 15-ին Ազատության հրապարակում կկայանա հանրահավաք, որտեղ կներկայացվեն տեսակետներ Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքում ընթացող արմատական փոփոխությունների վերաբերյալ եւ կնշվեն ստեղծված իրավիճակից դուրս գալու ուղիները:

Հանրահավաքում ելույթ կունենան Վազգեն Մանուկյանը, ճանաչված հասարակական եւ քաղաքական գործիչներ:

ՎԱՃԱՌՎՈՒՄ է
4 սենյականոց բնակարան
(Դավիթաշեն, II թաղամաս, 3-րդ շենք, բն. 4):
Զանգահարել 72-89-83

ՎԱՃԱՌՎՈՒՄ է
2 սենյականոց բնակարան,
Ֆրունզեի փ. շենք 6, 34 բն., 5 հարկանի շենքի 5-րդ հարկում:
Տեղ.՝ 44-97-40, 58-18-41
(«Հայրենիք» կինոթատրոնի մոտ):

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՆՔ ՀՐԱՎԻՐՈՒՄ
երիտասարդ, բարեսեր վաճառողուհիների (անգլերենի որոշ իմացությամբ):
Մանրամասների համար այցելել Աբովյան փ. 15, սենյակ 17 կամ զանգահարել 56-53-85, 56-19-84:

Ուզո՞ւմ եք նիհարել առանց դիետայի եւ ֆիզկուլտուրայի:
Զանգահարեք
52-93-53
ժամը 9-18 ը

«ՍՓՅՈՒՌ» ՏԵՂԵԿԱՏՈՒ - ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
հեռախոսով (589167, 581351) - պարբերաբար հրատարակվող տեղեկագրերով - մագնիսական սկավառակներով - INTERNET ցանցով (http://www.arminco.com/spyur)

«Տիգրան Մեծ», հրատարակչության տպարան. Երեւան-23 Արշակունյաց 2 Գրանցման թիվ 65. Դասիչ 69149 Պատվեր 756 Տպաքանակը 3500 Ստորագրված է տպագրության 9.02.1998 Գինը 100 դրամ

digitised by A.R.A.R.@